ԳԼՈԲՈՒՄ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԼՈԲԱԼԱՑՈՒՄ

ԱԴՐԲԵՋԱՆ՝ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՎԵԿՏՈՐ

12

Հուլիս, 2007

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գ Լ Ո Բ Ո Ւ Մ
Վերլուծական տեղեկագիր

Г Л О Б У С
Аналитический бюллетень

№ 12 (20)
Հուլիս, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինքնիշխանություն և գլոբալացում 3

«Միջուկային զենքի չտարածում. հաջողություններ, անհաջողություններ, դասեր»
միջազգային գիտաժողովի շուրջ *(ծառայողական)* 6

Քենեբանկպորտի հանդիպումը. իրավիճակային վերլուծություն 8

Ադրբեջանում ապատեղեկատվության ուղղությամբ
նպատակային աշխատանքի ծավալման վերաբերյալ 13

Ադրբեջան՝ իսլամական վեկտոր 16

Турция готовится к интервенции в Ирак 20

Ծպտյալ հայերը թուրք գիտնականների
ուշադրության կիզակետում 23

«Կան համշենցիներ, հատկապես երիտասարդների մեջ,
որոնք իրենց բացահայտ հայ են համարում» 28

Ժերար-Ֆրանսուա Դյումոնի այցը «Նորավանք» *(ծառայողական)* 32

Հայկական համայնքները հետխորհրդային տարածքում 34

Միացյալ Նահանգների Հոլոքոստի մեմորիալ թանգարանը
ամերիկյան արժեքների համատեքստում 37

Transparency International. «Կոռուպցիայի ինդեքսը 2000-2006թթ.» 43

ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԼՈԲԱԼԱՑՈՒՄ

Այսօր քաղաքական-հասարակագիտական ոլորտի ամենահրատապ խնդիրներից է ազգային, ինքնիշխան պետությունների ապագայի հարցը: Ոմանք, հիմք ընդունելով համաշխարհային քաղաքական-իրավական-տնտեսական-տեղեկատվական ընդհանուր դաշտի ձևավորումը և վերազգային ընկերությունների ու տարաբնույթ կազմակերպությունների դերակատարման աճը, գտնում են, որ գլոբալացման հետևանքով ինքնիշխան պետությունները զարգացման հեռանկար չունեն: Համաձայն այդ մոտեցման՝ համայն մարդկությունն արդեն ոչ հեռու ապագայում կառավարվելու է վերազգային կառույցի կամ կառույցների կողմից: Մյուսները կարծում են, թե կառավարման նման համակարգը հակասում է մարդկային, ազգային էությանը և որ հետագա զարգացումներում ազգային-ինքնիշխան պետությունները շարունակելու են մնալ միջազգային հարաբերությունների հիմնական սուբյեկտը: Ակնհայտ է, որ ինքնիշխանության հարցն առանձնապես հրատապ է ոչ մեծ երկրների համար (ինչպիսին է նաև Հայաստանը), քանի որ ընդհանրական ռեսուրսների սակավության պատճառով նրանք առավել կախված են գլոբալ գործընթացներից:

Փոքր-ինչ պատմություն

Արևմտյան պատմագիտական ավանդույթի համաձայն՝ ազգային, ինքնիշխան պետությունները, որպես հանրության քաղաքական կազմակերպման հիմնական ձև, ի հայտ են եկել 17-րդ դարում, Եվրոպայում ծավալված Երեսնամյա պատերազմի ավարտից հետո: Այդ դարաշրջանում միմյանց դեմ հակամարտող եվրոպական հիմնական ուժերը Վեստֆալիայի (Սաքսոնիա) Օսնաբրյուկե և Մյունստեր քաղաքներում ընթացող բանակցությունների արդյունքում 1648թ. կնքեցին խաղաղության պայմանագիր, որը և նշանավորեց «ազգային պետություն» հասկացության վրա հենված միջազգային հարաբերությունների դարաշրջանի սկիզբը: Վեստֆալյան պայմանագիրն ամրագրեց նաև մեկ այլ իրողություն՝ Հռոմեական Սրբազան կայսրության (որը հավակնում էր լինել Եվրոպայի քաղաքական և ռազմական ուժի գլխավոր կենտրոնը) վերջնական վախճանը: Այսինքն՝ որոշակի վերապահումներով կարելի է պնդել, որ «Վեստֆալյան խաղաղությունը» և «ազգային պետություն» իրավական հասկացության ձևավորումն այդ դարաշրջանի եվրոպական «միաբևեռ համակարգի» փլուզման հետևանք էր:

Հետվեստֆալյան ժամանակաշրջանում ազգային պետությունները վերափոխումներ և զարգացումներ են ապրել: Մասնավորապես, քաղաքական գերակայության ձգտող կենտրոնների առաջացումը, որպես կանոն, նվազեցրել է ազգային պետությունների նշանակությունը: Օրինակ, Առաջին սառը պատերազմի դարաշրջանում և՛ «սոցիալիստական ճամբարի», և՛ «ազատ աշխարհի» երկրները, հաճախ սեփական կամքին հակառակ, իրենց իրավասությունների (հատկապես միջազգային հարաբերությունների ոլորտում) մի զգալի մասը «փոխանցել» էին համապատասխանաբար Մոսկվային և Վաշինգտոնին: «Սոցճամբարում» նման քաղաքական «կարգապահությունը» պահպանելու նպատակով «սովետները» հաճախ դիմում էին ռազմական ուժի, որի համար արժանանում էին համընդհանուր պախարակման: Մինչդեռ ԱՄՆ-ը, իր դաշնակիցներին վասալային կարգավիճակում պահելու համար, կիրառում էր ավելի նուրբ տեխնոլոգիաներ. դրանք ոչ միայն ավելի նպատակահարմար էին քաղաքական տեսակետից, այլև թույլ էին տալիս արևմտյան գաղափարախոսներին հիմնավորված քարոզել «ազատ աշխարհի» առավելությունների մասին և մեղադրել «սովետներին» «ինքնիշխանության» սկզբունքները խախտելու մեջ:

Առաջին սառը պատերազմի արդյունքում փլուզվեց ոչ միայն «սոցճամբարը», այլև այն կենցաղային պատրանքը, թե «չարի կայսրության» տապալումը կհանգեցնի ազգային և իրապես ինքնիշխան պետությունների ձևավորմանը. միաբևեռ համակարգի հաստատումն իր հետ բերեց այլ իրողություններ: Մասնավորապես, շրջանառության մեջ դրվեց «գլոբալացում»

եզրը, որը պարունակում է աշխարհաքաղաքական էքսպանսիայի հստակ բաղադրիչ: Ճիշտ է, նորանկախ պետություններից շատերը ձեռք բերեցին ինքնիշխանության ատրիբուտներ, սակայն նրանց քաղաքական կարգավիճակը քիչ բանով է տարբերվում նախկինից. թերևս, միակ տարբերությունն այն է, որ կառավարման կենտրոնը Մոսկվայից տեղափոխվել է Վաշինգտոն կամ Բրյուսել: Նման երկրները քաղաքագիտական-վերլուծական գրականությունում ստացել են նսեմացնող *«proxy»* անվանումը, որն իմաստային առումով, թերևս, ճիշտ է թարգմանել որպես «վստահագրով ղեկավարվող»:

Արդի պատկերացումներն ինքնիշխանության վերաբերյալ

Հարկ է նկատել, որ վերոնշյալ իրողությունները պատմական կամ քաղաքական առումով միանգամայն բնականոն են. պատմության ողջ ընթացքում ինչ-որ երկրներ, կախված լինելով ավելի հզորներից, ունեցել են սահմանափակ ինքնիշխանություն, իսկ երբեմն նաև՝ գաղութային կարգավիճակ: Կարելի է ասել, որ այս կամ այն պետության ինքնիշխանության չափը մշտապես պայմանավորված է եղել աշխարհաքաղաքական զարգացումներով, ինչպես նաև տվյալ ազգի հավաքական և հատկապես՝ նրա ընտրանու կարողություններով: Սակայն բոլոր պարագաներում «հետվեստֆալյան» դարաշրջանում ինքնիշխանության անհրաժեշտությունը, առնվազն տեսական քաղաքագիտությունում, ընդունվում էր անվերապահորեն: Մինչդեռ վերջին ժամանակներս վերլուծական գրականությունում նկատվում է «ինքնիշխանության» վերիմաստավորման հստակ միտում՝ այն համատեքստում, թե գլոբալացման գործընթացներն իմաստազրկում ու արժեզրկում են «ինքնիշխանություն» հասկացությունը:

Անշուշտ, ինտեգրման արդի գործընթացներն օբյեկտիվ բնույթ են կրում, և պետությունների փոխկապվածությունը քաղաքական-տնտեսական ոլորտներում իրոք աճել է: Այսօր ինքնիշխանությունը չի կարող բացարձակ կատեգորիա հանդիսանալ, և ցանկացած պետական միավորի համար անշահավետ է լիովին արհամարհել միջազգային նորմերը կամ միջազգային կազմակերպությունների բանաձևերը (տե՛ս, օրինակ, *Հավելվածի* «Переосмысление суверенитета» հոդվածը) : Սակայն այս ամենը չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի ազգային պետություններն անվանվեն «սատանայական մտահղացում», ինչպես արտահայտվել է ամերիկյան մի շատ բարձրաստիճան պաշտոնյա: Ակնհայտ է, որ նման հայեցակարգերը սպասարկում են «միաբևեռ աշխարհակարգ» անվանումը կրող քաղաքական նախագիծը, որը ենթադրում է միայն մեկ և բացարձակ ինքնիշխան տերության առկայությունը:

Հակառակ դիրքերից են հանդես գալիս «բազմաբևեռ աշխարհակարգի» կողմնակիցները: Ըստ նրանց մոտեցումների՝ ազգային պետության պահպանումը չի խոչընդոտում ինտեգրման և գլոբալացման գործընթացներին: Համարվում է նաև, որ ապասուվերենացումն ընդհանուր առմամբ բացասաբար է անդրադառնում գլոբալ զարգացումների վրա, քանի որ նման միտումը կարող է աշխարհը վերածել զորանոցի կամ հանրակացարանի. հայտնի է, որ այդպիսի պայմաններում հակասությունները ձեռք են բերում առավել արմատական բնույթ: Քաղաքագետները հատկապես շեշտում են այն թեզը, որ ինքնիշխանության արժեզրկումը հանգեցնելու է ազգերի մշակութային վերասերման և նրանց բնատիպության/ինքնատիպության վերացման:

Որոշ տեսաբաններ, հատկապես՝ ռուսական քաղաքագիտական դպրոցի ներկայացուցիչներ, ելնելով այսպես կոչված նեոկապիտալիստական տեսություններից, գտնում են, որ ազգերի ինքնիշխանության և բնատիպության պահպանումը հնարավոր է միայն համընդհանուր բարեկեցության գաղափարների և հասարակության բարոյական արժեքների գերակայման պարագայում, ինչը կհամընկներ գլոբալ զարգացումների վեկտորի հետ և կնպաստեր համամարդկային իդեալներին հասնելուն:

Չբացառելով վերոնշյալ սցենարի հնարավորությունը՝ նկատենք, որ այն ռուսական ավանդական քաղաքագիտական մշակույթի արգասիք է: Նման զարգացումն, իհարկե, առավել ցանկալին և օպտիմալն է: Բայց այդ սցենարն, ինչ-որ առումով, ուտոպիական է. այն հիշեցնում է համընդհանուր բարօրության, մասնավորապես՝ կոմունիզմի հասնելու գաղափարը: Մինչ-

դեռ արդի աշխարհի իրողություններն առայժմ լավատեսության առիթ չեն տալիս, և եթե նույնիսկ նման ներդաշնակ աշխարհակարգ հաստատվի, ապա՝ շատ հեռավոր ապագայում:

Նոր սառը պատերազմը՝ որպես ինքնիշխանության պահպանման մեխանիզմ

Վերլուծաբանների մի ստվար հատվածի կարծիքով՝ արդի քաղաքական իրադրությունը նման է նրան, ինչ կար ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև Առաջին սառը պատերազմի տարիներին: Սակայն այս նոր սառը պատերազմը, ի տարբերություն նախորդի, բազմաբևեռ է: Եթե նախկինում հակամարտությունն ընթանում էր ունիվերսալ գաղափարախոսություններ կրող երկու բևեռների միջև, այսօր այն ընդունել է միջքաղաքակրթական-ազգամիջյան բազմաբևեռ դիմակայության բնույթ: Կարելի է ասել, որ պետությունների ինքնիշխանությունը և ազգերի բնատիպությունը պահպանելու ձգտումն է այն հիմնական շարժիչ ուժը, որն ընդդիմանում է միաբևեռ աշխարհակարգին և ջանում է ձևավորել բազմաբևեռ համակարգ:

Նշենք նաև, որ բազմաբևեռության ձևավորման ներկայիս միտումները կարծես թե չեն ենթադրում «կոշտ» ռազմաքաղաքական դաշինքների ստեղծում, ինչը հնարավորություն է տալիս, մասնավորապես, Հայաստանի նման պետություններին իրագործել քաղաքական տեխնոլոգիաներ՝ ելնելով սեփական ազգային շահերից: Զարգացումների նման տրամաբանությունը ստեղծում է գուցե ոչ այնքան հարմարավետ, սակայն օբյեկտիվ պայմաններ ինքնիշխան պետությունների զարգացման համար:

Գագիկ Տեր-Հարությունյան

«ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔԻ ՉՏԱՐԱԾՈՒՄ. ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴԱՍԵՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՇՈՒՐՋ

2007թ. հունիսի 28-29-ին Մոսկվայում տեղի ունեցավ «Միջուկային զենքի չտարածում. հաջողություններ, անհաջողություններ, դասեր» խորագրով միջազգային գիտաժողով: Կոնֆերանսի կազմակերպիչներն էին Ռուսաստանի քաղաքագիտական ասոցիացիան, ԱՄՆ Հադսոնի ինստիտուտը, ՆԱՏՕ-ն, Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը: Կոնֆերանսի սահմանափակ մասնակիցների թվում էին այս հիմնախնդրով զբաղվող մասնագետներ տարբեր երկրներից. ԱՄՆ Գլոբալ անվտանգության ինստիտուտի տնօրեն Ջ.Գրանոֆֆը, Կալիֆորնիայի Լոս Անջելեսի համալսարանի պատվավոր ռեկտոր, ԱՄՆ Դեմոկրատական կուսակցության ղեկավարներից Ա.Կարնիսեյլը, Իսլամաբադի քաղաքական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, նախկինում Պակիստանի ԶՈՒ ԳՇ ղեկավար և ԱՄՆ-ում Պակիստանի դեսպան Ջ.Կարամատը, Միջուկային զենքի չտարածման պայմանագրի հեղինակներից Ռ.Տիմերբաևը, Ջ.Գոլդբլատը են:

Ընդհանուր հիմնախնդիրներ

Կոնֆերանսի բոլոր մասնակիցներն իրենց ելույթներում և քննարկումների ժամանակ նշեցին, որ ներկայումս միջուկային զենքի տարածման վտանգը հիմնականում կապված է միջազգային քաղաքականության ոլորտում ԱՄՆ նվազող ազդեցության և հեղինակության հետ: Հաշվի առնելով այն փաստը, որը ԽՍՀՄ փլուզումից հետո հենց Միացյալ Նահանգներն էր վերածվել միջուկային զենքի տարածման դեմ շատ թե քիչ ակտիվ պայքարող պետության, ԱՄՆ ներկայիս անհաջողություններն Իրաքում և Իրանի հետ հարաբերություններում կարող են առաջ բերել միջուկային զենքի տարածման նոր ալիք ոչ միայն Մերձավոր Արևելքում, այլ նաև ողջ աշխարհում: Պետությունների շարքում, որոնք կարող են ակտիվորեն զարգացնել սեփական միջուկային կրկնակի նշանակության ծրագրերը, նշվեց նաև Թուրքիան:

Կոնֆերանսի ռուս մասնակիցները, այդ թվում նաև Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի պրոֆեսոր, ՊԻՐ-Կենտրոնի խորհրդի նախագահ Ռ.Տիմերբաևը, նշեցին, որ Ռուսաստանի ղեկավարությունը, չնայած տեղեկատվական դաշտում տարվող ակտիվ հակամիջուկային քաղաքականությանը, չի գիտակցում միջուկային զենքի տարածման կանխարգելման իրական անհրաժեշտությունը:

Կոնֆերանսի ընթացքում մեծ ուշադրության արժանացան հնդկա-պակիստանյան հարաբերությունների, ինչպես նաև Իսրայելի միջուկային ծրագրի հիմնախնդիրները: Դա պայմանավորված էր նրանով, որ կոնֆերանսի մասնակիցների և զեկուցողների թվում էր Արաբական պետությունների լիգայի միջազգային կապերի գծով տնօրեն, եգիպտացի դիվանագետ Վ.Ալ-Ասադը:

Հայաստանի և Ադրբեջանի հիմնախնդրի արծարծումը

Կոնֆերանսի աշխատանքների ժամանակ արծարծվեց նաև Հայաստանի և Ադրբեջանի հիմնախնդիրը: Կոնֆերանսի մասնակից, Միջազգային անվտանգության ինստիտուտի մոսկովյան ներկայացուցչության ղեկավար Իվան Սաֆրանչուկն իր ելույթում նշեց, որ Հարավային Կովկասում Ռուսաստանի համար կարևորագույն նշանակության պետություն, անկասկած, համարվում է Ադրբեջանը: Միևնույն ժամանակ, ռուս-ադրբեջանական ռազմավարական հարաբերությունների զարգացումը կարող էր բերել ավելի լուրջ արդյունքների, եթե չլինեին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը և հայ-ռուսական ռազմաքաղաքական դաշին-

քը: Սակայն, քանի որ Հայաստանի հետ հարաբերությունները շարունակելու են կարևոր մնալ ռուսական ղեկավարության համար, ապա Ադրբեջանը ստիպված է լինելու ավելի ակտիվ քայլեր ձեռնարկել սեփական անվտանգությունն ապահովելու համար և փնտրել նոր դաշնակիցներ: Վերջիններս Ադրբեջանին անհրաժեշտ են, քանի որ բավական իրատեսական է դարձել իրանական վտանգը Բաքվի համար, որն ավելի կուժեղանա, եթե Թեհրանին հաջողվի ստեղծել միջուկային զենք: Սա, ըստ Սաֆրանչուկի, անկասկած, կբերի ադրբեջանա-ամերիկյան ռազմական կապերի ակտիվացման և Ադրբեջանում ամերիկյան ռազմակայանների տեղակայման, ինչը բավական վտանգավոր է ռուսական շահերի համար: Այս փաստի գիտակցությունը պետք է ստիպի Ռուսաստանի ղեկավարությանն ավելի ակտիվ պայքարել Իրանի միջուկային ծրագրի դեմ, ինչպես նաև հաշվեկշռել իր արտաքին և ռազմական քաղաքականությունը Հարավային Կովկասում:

Սաֆրանչուկի խոսքերով՝ շուտով այս թեզը նա ավելի հիմնավորված կներկայացնի համապատասխան աշխատության մեջ, որը պատրաստվում է հրատարակության Մոսկվայում և Լոնդոնում, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Ադրբեջանա-պակիստանյան համագործակցության մասին

Պակիստանցի պահեստային գեներալ, նախկին դիվանագետ *Ջ.Կարամատի* հետ ոչ պաշտոնական մթնոլորտում տեղի ունեցած բավական ազատ խոսակցության ժամանակ քննարկվեցին մի շարք հարցեր, որոնք վերաբերում են Իսլամաբադի քաղաքականությանը Հարավային Կովկասի և Կասպիցի տարածաշրջանում:

Ըստ պակիստանցի գեներալի՝ վերջին մի քանի տարիներին զգալիորեն թուլացել է ադրբեջանա-պակիստանյան համագործակցությունը ռազմական և քաղաքական ոլորտում: Սա բացատրվում է նրանով, որ Իսլամաբադում եկել են վերջնական եզրակացության այն մասին, թե ադրբեջանական նավթն ու գազը երբեք չեն կարող հասնել Պակիստան, ինչի հնարավորությունները դեռևս սկսել էին քննարկվել Ադրբեջանի նախկին նախագահ Հ.Ալիևի օրոք: Ինչ վերաբերում է պակիստանյան զենքի գնմանը Ադրբեջանի կողմից, ըստ պակիստանցի գեներալի՝ «հազիվ թե մի 20 տանկ վաճառված լինի Ադրբեջանին»:

Միևնույն ժամանակ, Ադրբեջանն ինքը բավական զուսպ է սկսել վերաբերվել Պակիստանի հետ համագործակցությանը: Սա բացատրվում է Հնդկաստանի հետ Բաքվի կապերի ակտիվացմամբ, ինչպես նաև Պակիստանի նկատմամբ ամերիկյան նոր դիրքորոշմամբ: Այս համատեքստում պակիստանցի գեներալը հետաքրքիր մտքեր արտահայտեց ԱՄՆ-Պակիստան հարաբերությունների վերաբերյալ:

Ըստ նրա՝ վերջին երկու տարվա ընթացքում ԱՄՆ-ը ակտիվ քայլեր է ձեռնարկում Փ.Մուշարաֆի ռեժիմի տապալման ուղղությամբ՝ լավ գիտակցելով, որ Մուշարաֆին այլընտրանք կարող է դառնալ միայն ծայրահեղ սուննի իսլամիստական վարչակարգի հաստատումը: Նման վարչակարգի ի հայտ գալը Պակիստանում պետք է դառնա այն հիմնական առիթը, որը պետք է օգտագործվի ԱՄՆ-ի կողմից Պակիստան ներխուժելու և վերջինիս միջուկային պոտենցիալը վերացնելու համար: Սակայն մինչ այդ ԱՄՆ-ի կողմից կարող է թույլ տրվել, որ իսլամիստներն առճակատման գնան գաղափարական հակառակորդ շիական Իրանի հետ՝ վերջինիս մահացու հարված հասցնելով: Եվ հետո միայն իսլամիստական ռեժիմը կվերացվի ԱՄՆ միջամտության կամ հերթական հեղաշրջման արդյունքում:

ՔԵՆԵԲԱՆԿՊՈՐՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ս.թ. հուլիսի 1-2-ը ամերիկյան Մեն նահանգի Քենեբանկպորտ քաղաքի մոտ տեղակայված Բուշ ընտանիքի *«Walker's Point»* ամառանոցային տանը կայացավ Բուշ-Պուտին հանդիպումը: Թեև փորձագիտական որոշ գնահատականների համաձայն, նշված հանդիպումը, ավելի ճիշտ՝ հանդիպման ձևաչափը, պարզապես չէր կարող թույլ տալ ռազմավարական կարգի պայմանավորվածություններ կայացնել երկու տերությունների միջև (հետևաբար՝ հանդիպման նպատակների շարքում մեծ տեղ պետք է հատկացնել ձևական կողմին կամ այն դիտարկել երկու երկրներում մեկնարկող նախագահական *PR*-կամպանիաների ներքո), սակայն, իրականում հանդիպումն ուներ շրջադարձային նշանակություն ոչ միայն ռուս-ամերիկյան, այլև միջազգային հարաբերությունների առումով: Գոյություն ունեն առնվազն երեք կետեր, որոնք թույլ են տալիս կատարել նման հետևություն.

- 2007թ. ամառը այն վերջին ժամանակահատվածն է, որ երկու նախագահների համար հնարավորություն է պարունակում միջազգային նշանակության ռազմավարական որոշումներ կայացնել ու ամենակարևորը՝ ձեռնամուխ լինել այդ որոշումների իրականացմանը՝ հնարավորինս քիչ ենթարկվելով ներքաղաքական՝ նախընտրական գործընթացների ազդեցությանը. հայտնի է, որ 2007թ. աշնանից Ռուսաստանում և ԱՄՆ-ում այդ երկրների էլիտաները մտնում են նախընտրական ակտիվ կամպանիաների փուլ՝ 2008թ. նախագահական ընտրություններին ընդառաջ,
- հետևաբար, հաջորդ անգամ Մոսկվան ու Վաշինգտոնը ռազմավարական նշանակություն ունեցող հարցերի կարող են անդրադառնալ միայն 2009թ. սկզբին, երբ իշխանության ղեկին կլինեն նոր նախագահներ. այդ դեպքում երկու տերությունների համար կարևոր մի շարք հարցերի առումով (ԱՄՆ հակահրթիռային պաշտպանության համակարգի (ՀՀՊ) ընդլայնում, Իրան, Կոսովո, մրցակցությունը հետխորհրդային տարածքում և այլն[1]) գալիք մեկ ու կես տարին կարող է որոշ դեպքերում կողմերից առնվազն մեկի համար «անդառնալի» փոփոխությունների պատճառ հանդիսանալ,
- և վերջապես, չպետք է մոռանալ, որ Քենեբանկպորտի հանդիպումը հաջորդեց հունիսի 6-8-ը գերմանական Հայլիգենդամ քաղաքում կայացած Մեծ ութնյակի գագաթաժողովին, որի ժամանակ ռուս-ամերիկյան ձևաչափում բարձրացված հարցերը նույն վերը ներկայացվածն էին. փաստորեն, օրակարգի իմաստով Ատլանտիկայի ափին կայացած Բուշ-Պուտին հանդիպումը Մեծ ութնյակի շրջանակներում կայացած ռուս-ամերիկյան գագաթաժողովի տրամաբանական շարունակությունն էր ու ամենակարևորը՝ եզրափակիչը:

Այսպիսով, ոչ միայն ռուս-ամերիկյան հարաբերությունների, այլև ողջ միջազգային քաղաքականության համար քենեբանկպորտյան հանդիպումն, իրականում, ոչ միայն անչափ կարևոր էր, այլև հեռանկարի իմաստով հենց *«Walker's Point»-ում* ձեռք բերված կամ ձեռք չբերված պայմանավորվածությունների գործոնն է ազդեցիկ դերակատարություն ունենալու Մոսկվա-Վաշինգտոն գծում առնվազն մինչև 2009թ. սկիզբ:

---

[1] Այդ հարցերի մեջ պետք է ներառել նաև դեռևս 1991թ. հուլիսի 31-ին ԽՍՀՄ-ի ու ԱՄՆ-ի միջև կնքված «Ռազմավարական հարձակողական զենքերի կրճատման ու սահմանափակման մասին» (անգլ.՝ *START-1,* ռուս.՝ *СНВ-1)* պայմանագրի խնդիրը: Պայմանագրի ժամկետը լրանում է հենց 2009թ.: Ըստ նշված պայմանագրի, Մոսկվան ու Վաշինգտոնը պարտավորվում էին 7 տարվա ընթացքում իրենց միջուկային զինանոցը կրճատել այնպես, որ կողմերից յուրաքանչյուրի տրամադրության ներքո եղածը չգերազանցի 6 հազ. միավորը:

Քենեբանկպորտի արդյունքները. գնահատական

Չնայած արդեն հուլիսի 7-ին ամերիկյան *«CNBC»* հեռուստաալիքին տված հարցազրույցի ժամանակ այդ երկրի պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսն ուղղակի հայտարարեց, թե Վաշինգտոնում համաձայն չեն ռուսական կողմի առաջարկություններին և մտադիր են շարունակել ՀՀՊ ոլորտում Լեհաստանի ու Չեխիայի հետ ընթացող համագործակցությունը[1], իսկ հուլիսի 13-ին էլ ԱՄՆ Սենատը հատուկ ավելացում կատարեց Միացյալ Նահանգների 2008թ. պաշտպանական բյուջեի քննարկվող նախագծի մեջ՝ ամերիկյան ՀՀՊ համակարգի ստեղծումը հռչակելով Վաշինգտոնի պետական քաղաքականություն, սակայն քենեբանկպորտյան արդյունքների ընկալման իմաստով նախ և առաջ հարկ է առանձնացնել ռուսական կողմի երկու քայլերը.

- հուլիսի 14-ին Ռուսաստանը սառեցրեց «Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին պայմանագրով»[2] (ԵՍՍՄՊ) ստանձնած պարտավորությունների կատարումը,
- երեք օր անց՝ հուլիսի 17-ին, Մոսկվան հերթական ու շատերի կարծիքով՝ վերջին անգամ մերժեց ամերիկա-բրիտանա-ֆրանսիական համատեղ՝ երրորդ առաջարկը Կոսովոյի խնդրի վերաբերյալ, որը հուլիսի 16-ին ներկայացվել էր ՄԱԿ Անվտանգության խորհրդի քննարկմանը:

Դեռևս հունիսի 25-ին ռուսական *«Независимая газета»-ն* գրել էր, թե Պուտինն արդեն իսկ ստորագրել է ԵՍՍՄՊ շրջանակներում Ռուսաստանի պարտավորությունների կատարումը սառեցնող հրամանագիրը: Ըստ ամենայնի, նշված տեղեկությունը համապատասխանում էր իրականությանը, և պատահական չէ, որ այն լույս աշխարհ եկավ Քենեբանկպորտի հանդիպումից անմիջապես առաջ, իսկ բուն հրամանագիրը հրապարակվեց այդ հանդիպումից հետո: Պարզ է, որ *«Walker's Point»-ում* նշված հանգամանքը կիրառվել է որպես ճնշամիջոց ամերիկացիների նկատմամբ:

Պետք է այդ նույն տրամաբանության ներքո դիտարկել նաև ռուսական կողմի մերժումը Կոսովոյի հարցի առնչությամբ: Դժվար թե սոսկ զուգադիպություն լինի այն, որ ռուսական դիվանագիտությունը Կոսովոյի խնդրի վերաբերյալ իր վերջնական[3] դիրքորոշումը ներկայացրեց միայն Քենեբանկպորտի գագաթաժողովից հետո: Հիմնավորված է թվում այն տեսակետը, ըստ որի՝ Կոսովոյի խնդրում Մոսկվայի մոտեցման հիմքում նույնպես ճնշումն էր Արևմուտքի նկատմամբ, քանի որ ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակում այսօր Ռուսաստանը չի կարող լուրջ շահեր հետապնդել Բալկաններում:

Ի տարբերություն Ռայսի հայտարարության կամ ԱՄՆ Սենատի որոշման՝ քենեբանկպորտյան բանակցություններից անմիջապես հետո Մոսկվայի նման քայլերը կարող են միայն վկայել, որ ռուս-ամերիկյան օրակարգում տեղ գտած ռազմավարական մի շարք հարցերի և,

---

[1] Հատկանշական է, որ Քենեբանկպորտի հանդիպման հենց հաջորդ օրը՝ հուլիսի 3-ին, Չեխիայի Ազգային անվտանգության խորհուրդը որոշում կայացրեց մայրաքաղաք Պրահայից շուրջ 90կմ հարավարևմուտք գտնվող Միշով գյուղի (Պլզենի մարզ) մոտ ընկած հողատարածքը տրամադրել ամերիկյան ՀՀՊ համակարգի մասը հանդիսացող ռադարային կայանի *(«X-Band Radar»)* շինարարության համար: Իսկ հուլիսի 16-ին Լեհաստանի փոխարտգործնախարար Վիտոլդ Վաշչիկովսկին հայտարարեց, թե, ըստ երևույթին, 2008թ. փետրվարին Լեհաստանում կսկսվի ամերիկյան ՀՀՊ համակարգի մասը հանդիսացող հրթիռային *(«Ground Based Interceptor»)* կայանի շինարարությունը: Պաշտոնապես ռազմակայանի տեղը դեռ հստակեցված չէ: Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ հարցի վերաբերյալ ամերիկա-լեհական համապատասխան պայմանագիրը կկնքվի արդեն այս սեպտեմբերին կամ հոկտեմբերին:

[2] Կնքվել է 1990թ. նոյեմբերի 19-ին:

[3] Ըստ արևմտյան դիվանագետների՝ Կոսովոյի խնդրի կապակցությամբ հուլիսի 16-ին ՄԱԿ ԱԽ ներկայացված տարբերակը վերջինն է, և նոր փաստաթուղթ Մոսկվայի քննարկմանը չի ներկայացվելու: Ըստ այդ փաստաթղթի՝ Սերբիայի ու Կոսովոյի միջև առավելագույնը չորս ամիս տևող բանակցություններից հետո, եթե չի հաջողվում փոխհամաձայնության հանգել, վերջինս մեխանիկորեն դուրս է գալիս Բելգրադի իրավասությունից՝ անցնելով Պրիշտինայում գործող Եվրամիության հատուկ գրասենյակի իրավասության ներքո՝ ըստ էության ստանալով կիսաիրավական անկախություն Սերբիայից:

առաջին հերթին, ԱՄՆ ՀՀՊ համակարգի վերաբերյալ բանակցությունները, փաստորեն, սառեցված են[1]: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ Քենեբանկպորտում կողմերն, ընդհանուր առմամբ, մտել են փակուղի:

Եթե այս գնահատականը ճիշտ է, ապա առաջիկա 1.5-2 տարիների ընթացքում մենք կարող ենք ականատեսը լինել ռուս-ամերիկյան հարաբերությունների մշտական սրացումների՝ մինչև սկզբունքային նոր իրավիճակի պայմաններում նոր պայմանավորվածությունների հանգելու փորձերը՝ 2009թ. առաջին կիսամյակ:

Քենեբանկպորտ. միջազգային քաղաքականություն

Թեև, պայմանականորեն, ս.թ. փետրվարի 10-ին Մյունխենում Ռուսաստանի նախագահ Վ.Պուտինի ելույթից հետո ռուս-ամերիկյան նորագույն հարաբերություններում սկիզբ առած փոխադարձ մեղադրանքների փուլը Քենեբանկպորտում, թերևս, ավարտվեց, իսկ հակասությունների մասով կարծես թե դեռ ամեն ինչ նոր է սկսվում, սակայն ներկայացվածի համատեքստում առանձնացան երկու բավական ուշագրավ հանգամանքներ.

- վերջին 20 տարում առաջին անգամ Ռուսաստանի ղեկավարությունը կարողացավ բավական լուրջ դիվանագիտական-տեղեկատվական ճնշում բանեցնել Վաշինգտոնի նկատմամբ,
- Եվրամիության ստեղծման պահից ի վեր առաջին անգամ ռուս-ամերիկյան հակասությունները դարձան Միության ներսում ընթացող քաղաքականության գործոն:

Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Քենեբանկպորտում կայացած բանակցությունների արդյունքում Ռուսաստանի նախագահն առաջարկեց ԱՄՆ ՀՀՊ համակարգի առնչությամբ առկա ռուս-ամերիկյան հակասությունների հարցը տեղափոխել «Ռուսաստան-ՆԱՏՕ» ձևաչափ: Էլ ավելի ուշագրավ էր, որ թե՛ ՆԱՏՕ-ում և թե՛ անգամ Բուշ-կրտսերի վարչակազմում այդ առաջարկություններն, ընդհանուր առմամբ, դրական արձագանք գտան:

Դեռևս փետրվարի 10-ին Վ.Պուտինի Մյունխենում ունեցած հանրահայտ ճառից հետո աչքի զարնեց այն հանգամանքը, որ գերմանական ազդեցիկ վերլուծաբանական ու լրատվական որոշ շրջանակներ մի մեծ մասով դրական գնահատեցին Ռուսաստանի նախագահի վերոհիշյալ ելույթը: Պատկերը պարզվեց, երբ ս.թ. մարտի 6-ին Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը կոչ արեց օգտագործել ՆԱՏՕ ձևաչափը՝ ԱՄՆ ՀՀՊ համակարգի տեղակայման հարցի շուրջ ռուս-ամերիկյան խորհրդակցություններ կազմակերպելու համար: Այս պարագայում պետք է նաև հաշվի առնել Գերմանիայի նախորդ կանցլեր Գերհարդ Շրյոդերի[2] մարտի 12-ի հայտնի հայտարարությունը, երբ վերջինս վտանգավոր ու անհեթեթ բնորոշեց Լեհաստանում ու Չեխիայում ՀՀՊ համակարգի տարրեր տեղակայելու ԱՄՆ ծրագրերը:

Գերմանիայի նման մոտեցման պատճառը պարզ է: Հաշվի առնելով առանց այդ էլ լեհ-գերմանական հարաբերություններում հատկապես վերջին շրջանում նկատվող հակասու-

---

[1] Այստեղ հարկավոր է տարբերություն տեսնել նրանում, որ Ռայսի հայտարարությունն ու ԱՄՆ Սենատի որոշումն իրականում չեն կարող բացառել խնդրի վերաբերյալ ռուս-ամերիկյան հետագա բանակցությունների անցկացումը (ինչպես եղել է շատ դեպքերում), մի բան, որը, փաստորեն, անհնար են դարձնում Ռուսաստանի վերոհիշյալ քայլերը, քանի որ ամերիկացիների համար մի զգալի մասով անհետաքրքիր, գուցե նաև այլևս անընդունելի են դարձնում այդ նույն բանակցությունները:

[2] Հիշեցնենք, որ պաշտոնավարման ժամկետի ավարտից շատ չանցած՝ Գերհարդ Շրյոդերը ստանձնեց Ռուսաստանը Գերմանիային կապող գազամուղի կառուցմամբ զբաղվող ռուս-գերմանական համատեղ *«North European Gas Pipeline Company»* ընկերության բաժնետերերի խորհրդի նախագահի պաշտոնը:

թյունների աճը՝ ամերիկյան ռազմական ներկայության[1] հաստատումն անուղղակիորեն կրճատելու է գերմանական ազդեցությունը Վարշավայում: Հեռանկարային առումով Բեռլինը խնդիր է տեսնում նաև ողջ Արևելյան Եվրոպայի առնչությամբ, ուր, ինչպես հայտնի է, ընթանում է ամերիկյան ռազմական համակարգերի հիմնումը: Բացի այդ, գերմանական շահերի օգտին չէ Արևմուտք-Ռուսաստան հարաբերությունների լուրջ սրացումը:

Ռուսական դիվանագիտության կիրառած նման կարգի ճնշումը Վաշինգտոնի նկատմամբ, հատկապես Մեծ ութնյակի վերջին ու Քենեբանկպորտի հանդիպումների ժամանակ Վ.Պուտինի ցուցաբերած ակտիվությունը և Լեհաստանում ու Չեխիայում ԱՄՆ ՀՀՊ համակարգի տարրերի տեղակայման հարցը «Ռուսաստան-ՆԱՏՕ» հարթություն տեղափոխելու մասին Ռուսաստանի նախագահի առաջարկությունն իրականում պետք է ընկալել որպես ռուս-գերմանական համատեղ կամպանիա[2]:

Մյուս կողմից՝ հիմքեր կան ենթադրելու, թե Ռուսաստանի հետ փոխգործակցության հարցը Բեռլինում լուծվել է ոչ առանց Փարիզի հետ որոշակի պայմանավորվածությունների: Հուլիսի 13-ին Մոսկվայում *«Газпром»-ի* և ֆրանսիական *«Total»* նավթագազային ընկերության միջև կնքվեց պայմանագիր, ըստ որի՝ վերջինիս բաժին հասավ Բարենցի ծովում գտնվող «Շտոկման» հայտնի գազահանքը շահագործող ընկերության 25%-ը[3]: Հարկ է հիշեցնել, որ նախորդ երկու տարիների ընթացքում «Շտոկմանի» հարցը ռուս-ամերիկյան ու ռուս-բրիտանական քաղաքական օրակարգի կարևոր հարցերից էր: Թեև Մոսկվան հայտարարում է, թե պատրաստ է վաճառել բաժնետոմսերի ևս 24%-ը՝ *«Газпром»-ին* թողնելով վերահսկիչ՝ 51%-ը, սակայն կասկածից վեր է, որ *«Total»-ի* օգտին կայացրած որոշումը քաղաքական է և այն, ըստ ամենայնի, պետք է գա գումարվելու գազային ոլորտում ռուս-գերմանական ռազմավարական համագործակցությանը:

Եվ վերջապես, նույն զարգացումների հետ պետք է կապել հունիսի 21-23-ը Բրյուսելում կայացած Եվրամիության (ԵՄ) գագաթաժողովի ժամանակ անդամ երկրների, հատկապես՝ Գերմանիայի ու Լեհաստանի միջև երևան եկած լուրջ հակասությունները՝ կապված ԵՄ նոր սահմանադրության հետ: Թեև հակասությունները մեծ մասով հաջողվեց հարթել, սակայն քիչ հավանական է, որ Մեծ ութնյակի գագաթաժողովի ու Քենեբանկպորտի հանդիպման շուրջ ընթացող միջազգային զարգացումների ֆոնին ԵՄ ներսում ծագած հակասություններն ունենան լիովին առանձին տրամաբանություն՝ մանավանդ որ նույն բրյուսելյան գագաթաժողովի օրերին պարզ դարձավ, որ Լեհաստանին լրջորեն աջակցում է նաև Մեծ Բրիտանիան:

Հետևություններ

Հուլիսի 16-ին պաշտոնական Լոնդոնի որոշումը՝ երկրից դուրս հրավիրել Մեծ Բրիտանիայում ռուսական դեսպանության չորս դիվանագետներին, անշուշտ, վկայում է, որ ռուս-ամերիկյան ու ռուս-բրիտանական հարաբերությունները մտնում են առճակատման նոր փուլ, և այդ առումով քենեբանկպորտյան հանդիպման արդյունքները չէին կարող նշանակություն չունենալ: Իսկ քանի որ դա այդպես է, ապա որպես հիմնական հետևություն պետք է առանձնացնել այն, որ առաջիկայում Ռուսաստան-ԱՄՆ/Մեծ Բրիտանիա հարաբերություններում երևան են գալու միմյանց նկատմամբ ճնշումներ բանեցնելու նոր ոլորտներ և շրջաններ: Այդ

---

[1] Օրինակ, ռուս փորձագետները վստահ են, որ ՀՀՊ համակարգի տարրերին կհետևի Պենտագոնի այլ զորամիավորումների մուտքը Լեհաստան, Չեխիա, այնպես, ինչպես եղավ Ռումինիայի և Բուլղարիայի դեպքում:

[2] Ուշագրավ էր, որ Քենեբանկպորտի հանդիպումից հետո, արդեն Մոսկվայում Պուտինի օտարերկրյա բարձրաստիճան առաջին հյուրն էր Բավարիայի վարչապետ և կուսակցական գծով Մերկելի տեղակալ Էդմունդ Շտոյբերը:

[3] «Շտոկման» գազահանքը համարվում է աշխարհում ամենախոշորներից մեկը՝ պարունակելով 3.7 տրլն մ^3 բնական գազ: Գազահանքի շահագործման համար ստեղծվում է հատուկ ընկերություն, և *«Total»-ի* հետ կայացած գործարքից հետո այդ ընկերության բաժնետոմսերի 75%-ը պատկանում է *«Газпром»-ին:*

իմաստով, օրինակ, հետխորհրդային տարածքում ընթացող գործընթացները պարզապես չեն կարող դուրս մնալ ընդհանուր տրամաբանությունից։

Որպես հաջորդ կարևոր հետևություն պետք է առանձնացնել եվրոպական քաղաքականության մեջ Արևելյան Եվրոպայի գործոնի շարունակվող աճը։ Սակայն տրամաբանությունը, ըստ որի տեղի է ունենում այդ աճը, կարող է բավական ճակատագրական դերակատարություն ստանձնել ոչ միայն ԵՄ ներքին զարգացումների, այլև ԱՄՆ-Եվրոպա-Ռուսաստան հարաբերությունների առումով։

Եվ վերջապես, ներկայացված պայմաններում պետք է որ էականորեն նվազի միջազգային ու տարածաշրջանային կարևորության մի շարք խնդիրների առնչությամբ առաջիկայում որևէ «ճեղքում» կամ «առաջընթաց» գրանցելու հավանականությունը։

Սարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բաքվում ՀՀ և հայկական թեմաների առնչությամբ ապատեղեկատվական աշխատանքն ստացել է հիմնավոր և համակարգված բնույթ, առկա է պետական մոտեցում, երկրում աստիճանաբար ձևավորվում է «տեղեկատվական պետական քաղաքականություն», որի բաղկացուցիչն է Ղարաբաղյան հարցում և ՀՀ-ին առնչվող այլ թեմաներում զանգվածային ապատեղեկատվությունը: Հնարավոր է, որ այս ուղղությամբ աշխատանքները համակարգվում են Ադրբեջանի ԱԳ նախարարության մամուլի ծառայությունում, քանի որ այն կոչվում է մամուլի և *տեղեկատվական քաղաքականության վարչություն* (ընդգծումը- հեղ.): Պետք է ենթադրել, որ աշխատանքին կցված են նաև Ադրբեջանի նախագահի աշխատակազմը, երկրի հատուկ ծառայությունները: Ակնհայտորեն աշխատում են նաև մի շարք ոչ կառավարական հասարակական կառույցներ, որոնք վերահսկվում են: Խոսքն առաջին հերթին վերաբերում է «Բանկ ինֆորմացիա» կազմակերպությանը, որի ղեկավարն է Ռովշան Նովրուզօղլուն:

Բերենք հետևյալ օրինակները. 2005թ. փետրվարի 17-ին ադրբեջանական «Էխո» թերթը հաղորդել է, որ Հունգարիայում գործող «Հայաստան» միության անդամները պահանջում են, որպեսզի Ռամիլ Սաֆարովը մահապատժի ենթարկվի Երևանում: Իրականում Հունգարիայում «Հայաստան» անվամբ համայնքային հաստատություն ընդհանրապես գոյություն չունի: Նույն շրջանում ադրբեջանական մամուլը բազմիցս գրել է, թե Հունգարիայի հայերը Գ.Մարգարյանի իրավահաջորդների շահերը դատարանում ներկայացնելու համար հավաքել են €140 հազար, ինչը ևս կեղծիք էր: Դրանք հասարակական կարծիքն ուղղորդելուն, Սաֆարովի շուրջ երկրում աջակցություն ձևավորելուն ուղղված նպատակային քայլեր էին: Ադրբեջանական բանկերից մեկում բացվել էր հաշվեհամար, և կոչ էր արվում դրամական փոխանցումներ կատարել ի նպաստ Ռամիլ Սաֆարովի: Հունգարահայերի կողմից «€140 հազարի հավաքման» մասին սուտն ակնհայտ նպատակ ուներ դրդել տեղի հասարակությանը «հետ չմնալ» հայկական կողմից: Ըստ Բաքվի մամուլի, այս հաշվեհամարում ընդհանուր առմամբ հավաքվել էր մոտ $25 հազար: Ավելի ուշ Սաֆարովի գործի հետ կապված հրապարակ նետվեցին տեղեկություններ այն մասին, թե Գուրգեն Մարգարյանին կացնահարելուց առաջ Սաֆարովը նրան արթնացրել է, ինչը ևս չէր համապատասխանում իրականությանը: Բուդապեշտյան դատավարության ընթացքում մամուլ են նետվել նաև այլ կեղծ տեղեկություններ:

Բաքվի *«Зеркало»* թերթը 2006թ. նոյեմբերի 25-ին գրեց ոմն Սաֆա Բաբանի և Կնյազ Հասանովի մասին: «Բանկ ինֆորմացիա» կենտրոնի ղեկավար Նովրուզօղլուի տվյալներով՝ Բաբանը 1991թ. պարզ չէ, թե ինչպես Բաքվից մեկնել է Ստեփանակերտ և աշխատել որպես թարգմանիչ հայկական անվտանգության մարմինների համակարգում, ապա նույնիսկ դարձել ԼՂՀ նախագահի խորհրդականը(!): Կնյազ Հասանովը, Ռ.Նովրուզօղլուի երևակայությամբ, աշխատում է ՀՀ ՊՆ համակարգում և նույնիսկ ՀՀ ԱԺ-ում պատգամավորների խորհրդականն է ԼՂ գծով: Այնուհետև Նովրուզօղլուն նոր «մանրամասներ» է ներկայացնում վերջիններիս Երևանում բնակվելու, թալիշական անջատականությանը սատարելու մասին և այլն: Ընթանում է հասարակական տրամադրությունների վրա ներազդելու, հայատյացությունը խորացնելու, դավաճանների հանդեպ ատելություն բորբոքելու բացահայտ գործընթաց: Ռ.Նովրուզօղլուի հոդվածի պարբերություններից մեկը հնարավորություն է տալիս կռահել այս քարոզչական «բադիկի» ստեղծման մեկ այլ նպատակի մասին: «Կարծում եմ, փաստերին ծանոթանալով՝ յուրաքանչյուր ազերի կհասկանա, որ դավաճանները թեկուզ անուղղակի, բայց մեծ դեր ունեցան մեր 20%-ի կորստի գործում»,- գրում է «Բանկ ինֆորմացիայի» ղեկավարը: Ինչպես հայտնի է, Բաքվում որպես ռազմական անհաջողությունների պատճառ հիմնակա-

նում նշվում էր ՌԴ-ի կողմից ՀՀ-ին ցուցաբերված ռազմական օգնության մասին, սակայն ազերի «փորձագետը» փաստորեն հայտնագործել է ևս մեկ արդարացում ռազմաճակատում տեղի ունեցածի համար:

Նովրուզովլուն «հայտնագործել» է նաև հայ գրող, հրապարակախոս Զորի Բալայանի «Հարություն» խորագրով գիրքը, որի 260-րդ էջում հայ հեղինակը ներկայացնում է հայ զինվորականների կողմից ադրբեջանցիներին խոշտանգելու մանրամասներ: *«Зеркало»-ի* 2006թ. հունիսի 2-ի համարում Նովրուզովլուն նշում է նաև գրքի տպագրության տարեթիվը՝ 1996 և հրատարակչությունը՝ «Վանաձոր»: Նշենք, որ հայ մտավորականը նման խորագրով գիրք ընդհանրապես չունի և ՀՀ-ում չի գործում և որքան ինձ հայտնի է՝ երբևէ չի գործել «Վանաձոր» հրատարակչություն:

Ռ.Նովրուզովլուն նաև 1918թ. Ղուբայի շրջանում իբրև թե հայերի կողմից իրականացված հրեաների ջարդի մասին գիտաֆանտաստիկ պատմության հեղինակներից է: Նշենք, որ Ադրբեջանում շուրջ մեկ տարի հետևողականորեն շրջանառվող այս կեղծ վարկածը նաև Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի ուշադրության կենտրոնում է, տարվում է հետևողական աշխատանք հարցը միջազգայնացնելու, մասնավորապես՝ քարոզչական այս աղմուկը բուն Իսրայելում տարածելու ուղղությամբ:

Ռ.Նովրուզովլուն նաև տեղյակ է, որ Ղարաբաղյան պատերազմին ստորաբաժանումներ են մասնակցել ոչ ավելի, ոչ պակաս… Վատիկանից: Ըստ նրա, այս մասին «Վատիկանի ձայն» ռադիոկայանը 2004թ. ապրիլի 24-ին հատուկ թողարկում է պատրաստել: Ընդ որում, ռադիոկայանում 2007-ից պետք է բացվեր «Ղարաբաղյան լուրերի բյուրո» (տե՛ս *«Зеркало»* օրաթերթ, 27.10. 2006թ. *«Радио «Голос Ватикана» оказывает помощь Карабахским сепаратистам»):* Այս տարի Ռ.Նովրուզովլուն դեռ չի մանրամասնել՝ բացվե՞լ է Ղարաբաղյան լուրերի բյուրոն, թե՞ ոչ: Վերոհիշյալ բոլոր փաստերի համատեքստում «Բանկ ինֆորմացիա» կազմակերպության համար, թերևս, շատ ավելի տեղին կլիներ «Բանկ դեզինֆորմացիա» անվանումը:

2004թ. օգոստոսին Ադրբեջանի ՊՆ այդ ժամանակվա խոսնակ Ռամիզ Մելիքովը հրապարակեց տվյալներ ՀՀ-ից արտագաղթի տեմպերի մասին՝ նշելով, որ դրանք վկայում են, թե նման տեմպերի պահպանման պարագայում 25-30 տարի անց ՀՀ-ում բնակչություն չի լինի *(«Зеркало»* օրաթերթ, 14 օգոստոսի 2004թ., *«Проведенные в Карабахе военные учения нанесли «смертельный» удар процессу мирного урегулирования конфликта»):*

Ռ.Մելիքովը վկայակոչում էր «Վաշինգտոն Պոստ» թերթում հուլիսի 14-ին հրապարակված հայ լրագրող Հարություն Խաչատրյանի մի հոդվածը ՀՀ-ում արտագաղթի տեմպերի աճի մասին: Լրագրող Հ.Խաչատրյանն այդպիսի հոդված «Վաշինգտոն Պոստում» չի տպագրել: Նման թեմայով հոդված «Վաշինգտոն Պոստում» ընդհանրապես չկա:

Այս օրինակները կարելի է շարունակել: Խնդիրն այն է, որ գործ ունենք ադրբեջանական ապատեղեկատվության ծավալման հետ: Ապատեղեկատվական աշխատանքը նպատակ ունի երկրում սրել հակահայ տրամադրությունները և հայերի դեմ զայրույթի ու անգամ ատելության հենքի վրա միավորել հասարակայնությանը: Տեղեկությունների կեղծ լինելու մասին հարևան երկրում տեղյակ են լինում խիստ սահմանափակ թվով անձինք, քարոզչական «բադիկները» կլանվում են հասարակության կողմից և տարածվում: Բորբոքվում են նաև հայրենասիրության, անձնազոհության զգացումներ: Պետք է հաշվի առնել, որ խորհրդային շրջանում Բաքուն ինտերնացիոնալ քաղաք էր, բուն ադրբեջանական էթնոսի ձևավորումը դեռևս չէր ավարտվել: Արդյունքում՝ ԽՍՀՄ ժամանակահատվածում Ադրբեջանում հայրենասիրական, ազգայնական զգացումները, այլախոհությունն ու անկախության ձգտումները տարածված չէին: Ինտերնացիոնալ Ադրբեջանում հայրենիքի, ինչպես նաև «հողը պաշտպանելու» գաղափարները լիարժեքորեն ձևավորված չէին, և ներկայումս զանազան քարոզչական հնարքներով, տեղեկատվական աշխատանքով, ապատեղեկատվությամբ և հակահայ հիստերիաներով ստեղծվում է «ադրբեջանական ազգայնականությունը»՝ որպես ոչ թե սոսկ անհատների, այլ զանգվածային հասարակական երևույթ:

Ադրբեջանական նոր ինքնության ձևավորման, ազգային նկարագրի փոփոխության ու ազգայնականության աճի թեման այլ քննարկման առարկա է և ունի որոշակի հրատապություն՝ հակառակորդ երկրում հատկապես երիտասարդության շրջանում տիրող տրամադրությունները պատկերացնելու համար:

Առայժմ նշենք, որ, ցավոք, երբեմն ադրբեջանական հրապարակումները թարգմանաբար ներկայացվում են ՀՀ լրատվամիջոցներում՝ առանց ստուգման: Նպատակահարմար է, որ ադրբեջանական աղբյուրների հետ աշխատելիս թե՛ լրագրողների ու վերլուծաբանների և թե՛ ընթերցողների դիրքորոշումը լինի առավելապես քննողական: Պետք է հաշվի առնել, որ նավթային եկամուտների հաշվին Բաքվում առանց լուրջ բարդությունների կարող են հրապարակումներ պատվիրել նաև երրորդ պետությունների լրատվամիջոցներում: Մասնավորապես, փաստերը վկայում են, որ ՌԴ-ում ադրբեջանական դեսպանատունն այդպիսի պատվերներ է տալիս ռուսական որոշ թերթերի՝ «Կոմերսանտ», «Վրեմյա նովոստեյ» և այլն: Հաշվի առնելով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի վերջին հայտարարությունը «Հայաստանի վրա բոլոր ուղղություններով, այդ թվում նաև քարոզչական աշխատանքում գրոհելու մասին»՝ միանշանակ պետք է սպասել, որ այդ աշխատանքը կակտիվանա:

Հայկարամ Նահապետյան

ԱԴՐԲԵՋԱՆ՝ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՎԵԿՏՈՐ

Իսլամական ուղղության նշանակությունը և 2006թ. Բաքվի իսլամական օրակարգը

1991թ. անկախություն ձեռք բերելուց հետո Ադրբեջանի իշխանությունների առջև ծառացած էր արտաքին քաղաքականության առաջնահերթությունների հարցը: Պանթուրքիստական գաղափարախոսության ջատագով Ա.Էլչիբեյին հաջորդած Հ.Ալիևն առաջ քաշեց հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարելու անհրաժեշտության հարցը:

Միևնույն ժամանակ, Ադրբեջանի արտաքին քաղաքական հայեցակարգում աստիճանաբար կարևորվեց իսլամական ուղղությունը՝ նաև որպես իսլամական աշխարհի ներուժը Հայաստանի դեմ օգտագործելու կարևոր հնարավորություն: Համագործակցության առաջին քայլերը շոշափելի էին: Աֆղանստանի իշխանությունների հետ համաձայնություն ձեռք բերելուց հետո Ղարաբաղյան պատերազմին մասնակցեցին աֆղան մոջահիդները:

Ի թիվս այլ կռվանների՝ իսլամական համերաշխության գաղափարը կարող էր լավագույնս օգտագործվել իսլամական պետությունների աջակցությունը ձեռք բերելու համար: 1990-ականների սկզբներին Ադրբեջանը (ոչ առանց Թուրքիայի աջակցության) անդամակցեց իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնին՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությանը (ԻԿԿ): Հայ-ադրբեջանական հակամարտության հարցը շուտով դարձավ իսլամական օրակարգի հարց՝ Շուշիի և Լաչինի ազատագրումից հետո ձեռք բերելով կոշտ շեշտադրումներ:

Մեկ անգամ չէ, որ իսլամական շրջանակները Հայաստանը դատապարտել են իբրև «ագրեսոր», Ադրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություններ ունեցող երկիր, Հայաստանից պահանջել անմիջապես և առանց նախապայմանների դուրս բերել զորքերը «գրավյալ» տարածքներից:

Ադրբեջանն այսօր ակտիվորեն համագործակցում է իսլամական բարձրագույն քաղաքական մարմնի հետ: Միայն 2006թ. այստեղ տեղի ունեցան ԻԿԿ երկու կարևոր հանդիպումներ: Առաջինը հունիսի 19-21-ը արտաքին գործերի նախարարների XXIII կոնֆերանսն էր, որի արդյունքում ստորագրվեցին եզրափակիչ փաստաթուղթն ու Բաքվի հռչակագիրը, և մոտ երեք ամիս անց, սեպտեմբերի 9-12-ը, Բաքվում տեղի ունեցած իսլամական պետությունների տուրիզմի նախարարների V կոնֆերանսը: Երկու կոնֆերանսներում էլ Հայաստանը դատապարտվեց:

2006թ. սեպտեմբերի 3-ին Ստամբուլում պաշտոնապես բացվեց Երկխոսության և համագործակցության Իսլամական կոնֆերանսի երիտասարդական ֆորումի գրասենյակը, որն, ի դեպ, ստեղծվել էր Ադրբեջանի երիտասարդական կազմակերպությունների ազգային ասամբլեայի առաջարկով և ծրագրով: Ֆորումի առաջին նախաձեռնություններից մեկն ադրբեջանական քարոզչության ոգով գրված «Ղարաբաղ. փաստեր և հետևանքներ» գիրքն է՝ ԻԿԿ նոր նախագծի՝ «Հակամարտություններ և հումանիտար աղետներ ԻԿԿ երկրներում» շարքի առաջին հրատարակությունը, որը բաժանվեց հունիսին Բաքվում տեղի ունեցած իսլամական պետությունների արտգործնախարարների հանդիպման մասնակիցներին: Ֆորումի գլխավոր քարտուղարը Ադրբեջանի ներկայացուցիչ Էլշադ Իսքանդերովն է:

Հայ-ադրբեջանական թեման 1992-ից ի վեր ոչ միայն տեղ է գտնում իսլամական աշխարհի արտգործնախարարների և պետությունների ղեկավարների գագաթաժողովներում, այլև՝ ԻԿԿ ամենատարբեր ձևաչափերում: Ասվածի ապացույցն է 2006թ. սեպտեմբերի 25-ին Նյու Յորքում ԻԿԿ անդամ պետությունների արտգործնախարարների կոորդինացիոն հանդիպու-

մը, որտեղ ընդունված վերջնական փաստաթղթի 74 և 75 կետերը նվիրված էին Ադրբեջանի դեմ Հայաստանի «ագրեսիային»[1]:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության հետ Ադրբեջանի 2007թ. համագործակցությունը և դրա հեռանկարը

Հատկանշական է, որ Ադրբեջանը կարողանում է իսլամական ֆորումները լավագույնս օգտագործել սեփական քարոզչության և Ղարաբաղյան խնդրին հնչեղություն տալու իմաստով: Այս համատեքստում, որպես կանոն, Ադրբեջանը տեղեկատվական շրջանառության մեջ է դնում սխալ և միակողմանի տեղեկատվություն: Խոսելով իսլամական ինքնության և իսլամական աշխարհին հուզող խնդիրների մասին՝ Բաքուն մշտապես ընդգծում է իր որոշակի տեղն ու նշանակությունն իսլամական աշխարհում:

2007թ. փետրվարի 22-ին Ջիդդայում (Սաուդյան Արաբիա) ելույթ ունենալով ԻԿԿ գործադիր հանձնաժողովի նիստում, որը հրավիրվել էր քննարկելու Երուսաղեմի իսլամական տարածքներում իսրայելական էքսկավացիայի հարցը, Ադրբեջանի արտգործնախարար Է.Մամեդյարովը (նա հանգուցային դեր ուներ՝ որպես ԻԿԿ նախագահող երկրի ներկայացուցիչ) կրկին օգտագործեց առիթը՝ խոսելու հայ-ադրբեջանական խնդիրների մասին: Վերջինս զուգահեռներ անցկացրեց անկախության ուղին բռնած ադրբեջանցիների և պաղեստինցիների միջև, որոնք երկուսն էլ «տառապում» են: Նա նշեց, որ Ադրբեջանը պատրաստվում է ՄԱԿ քննարկմանը ներկայացնել բանաձևի մի նախագիծ և հույս ունի, որ ԻԿԿ անդամ պետությունները կաջակցեն բանաձևի ընդունմանը[2]:

2007թ. ապրիլի 26-28-ը Բաքվում Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում տեղի ունեցավ «Լրատվամիջոցների դերը հանդուրժողականության և փոխըմբռնման զարգացման հարցում» կոնֆերանսը, որի իրականացման գաղափարն առաջ էր քաշել հենց Ադրբեջանը:

Բացման ելույթում Ադրբեջանի արտգործնախարար Է.Մամեդյարովն Ադրբեջանը ներկայացրեց որպես հանդուրժողական երկիր, որտեղ խաչվում են տարբեր մշակույթներ: Ի վերջո, կապակցելով կոնֆերանսի թեման հայ-ադրբեջանական հակամարտության և ադրբեջանական «գրավյալ» տարածքների խնդրի հետ՝ նա ասաց, որ հազարավոր ադրբեջանցիներ էթնիկ զտումների արդյունքում քշվել են Հայաստանի իրենց «պատմական հողերից»:

Արտգործնախարարի տվյալներով՝ ներկայումս ոչ մի ադրբեջանցի Հայաստանում չի ապրում, մինչդեռ Բաքվում «առնվազն 30.000 հայ կա, որոնք խտրականության չեն ենթարկվում»: Հատկանշական է, որ Ադրբեջանի արտգործնախարարը իսլամաֆոբիայի և ընդհանրապես ահաբեկչության թեման կրկին փորձեց կապել Հայաստանի հետ: Նա իսլամական աշխարհին փորձեց ապացուցել, որ Ադրբեջանը բազմաթիվ ահաբեկչական գործողությունների զոհն է: Ըստ նրա տվյալների՝ «…հայկական ահաբեկչական կազմակերպություններն ավելի քան 30 ահաբեկչական գործողություն են իրականացրել Ադրբեջանի դեմ, ինչի արդյունքում զոհվել է 2.000 մարդ»[3]:

Հայ-ադրբեջանական հակամարտության թեման զերծ չմնաց նաև ԻԿԿ գլխավոր քարտուղար Է.Իհսանօղլուի (Թուրքիայի ներկայացուցիչ) զեկույցից: Վերջինս զգալիորեն նպաստում է իսլամական աշխարհում ադրբեջանական *PR-ին:* Խոսելով միջմշակութային, միջկրոնական երկխոսության, հանդուրժողականության և փոխհամաձայնության անհրաժեշտության մասին՝ գլխավոր քարտուղարը հույս հայտնեց, որ Իսլամական կոնֆերանսը կշարունակի համերաշխ գործել ադրբեջանական խնդիրների հարցում՝ հանուն նրա տարածքային

---

[1] Final Communiqué of the Annual Coordination Meeting of Ministers of Foreign Affairs of Member States of the Organization of the Islamic Conference- New-York, 25 September, 2006.

[2] Statement by H.E. Dr. Elmar Mammadyarov…, www.mfa.gov.az/eng/spee/29.shtml.

[3] OIC Conference on the Role of Media in the Development of Tolerance and Mutual Understanding will be held in Baku on April 26-28, 2007, www.bakumedia2007.gov.az/minister.pdf.

ամբողջականության՝ հաղթահարելու համար այդ երկրի դեմ ուղղված «ագրեսիան», որը դեմ է միջազգային իրավունքին[1]:

Հատկանշական է, որ արաբական երկրներից ժամանած երկու բանախոսները՝ Սաուդյան Արաբիայի մշակույթի և տեղեկատվության փոխնախարար Աբդուլ Ազիզ բեն Սալամեն և եգիպտական «Ալ-ահրամ» թերթի փոխխմբագիր Մուհամմադ Իբրահիմ Ալ-Դեսյուկին, հիշյալ խնդրին չանդրադարձան:

2007թ. մայիսի 15-16-ը Պակիստանի մայրաքաղաք Իսլամաբադում տեղի ունեցավ ԻԿԿ արտգործնախարարների XXXIV կոնֆերանսը, որտեղ Ադրբեջանի դեմ Հայաստանի ագրեսիան դատապարտող հատուկ բանաձև ընդունվեց[2]: Հիշյալ թեմայի մասին առանձին ելույթ ունեցավ ԻԿԿ գլխավոր քարտուղար Է.Իհսանօղլուն (ինչը հաճախ չէ, որ պատահում է)[3]: Բնականաբար, խնդրին անդրադարձավ նաև Մամեդյարովը, որը, բացի հայ-ադրբեջանական հիմնահարցից, անդրադարձավ նաև ԻԿԿ հետ Ադրբեջանի համագործակցությանն ու իսլամական թեմաներին[4]:

Առաջիկայում Ադրբեջանի իսլամական օրակարգում այլ ծրագրեր կան: Բաքվում պատրաստվում են կազմակերպել ԻԿԿ միջազգային գիտական կոնֆերանս՝ «Տուրիզմի դերը ԻԿԿ պետությունների տնտեսության մեջ» խորագրով: Հատկանշական է, որ իսլամական օրակարգի հարցերով զբաղվում է նաև Ադրբեջանի առաջին տիկինը: Մեհրիբան Ալիևայի հովանավորությամբ կրկին ԻԿԿ շրջանակներում 2008-ին Ադրբեջանը ծրագրում է հրավիրել ֆորում՝ «Գրականությունն իսլամական աշխարհում գլոբալ և համակողմանի հեռանկարի տեսանկյունից» վերնագրով: Բացի այդ, 2008-ի սեպտեմբերին Ադրբեջանը պատրաստվում է հրավիրել ԻԿԿ կրթության և գիտության նախարարների IV-րդ կոնֆերանսը:

Ադրբեջանում վերջին շրջանում և առաջիկայում ԻԿԿ հանդիպումների կտրվածքով այսպիսի հագեցած օրակարգը հազվադեպ երևույթ է Իսլամական կոնֆերանս կազմակերպության ցանկացած անդամ պետության համար: Նման ակտիվություն ԻԿԿ-ում ցուցաբերում են բացառիկ պետություններ: Պատահական չէ, որ Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևը մշտապես ընդգծում է Իսլամական կոնֆերանս կազմակերպության աջակցությունն Ադրբեջանին, ինչը, ըստ նրա, կօգնի միջազգային ասպարեզում իր երկրին հուզող հարցերն առաջ քաշելու համար: Նշենք, որ ԻԿԿ շրջանակներում Ադրբեջանը ստորագրել է բազմաթիվ պայմանագրեր, որոնցից կարևոր է ԻԿԿ պետությունների միջև տնտեսական, տեխնիկական և առևտրային համագործակցության մասին պայմանագիրը: Ադրբեջանը համագործակցում է Զարգացման իսլամական բանկի, ինչպես նաև իսլամական մի շարք բարեգործական հիմնադրամների և կազմակերպությունների հետ, որոնցից շատերը գործում են Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում: Իսլամական աշխարհի բարեգործական հաստատություններից շատերը Ադրբեջանում արդեն մի շարք ծրագրեր են իրականացրել՝ ներառյալ ծրագրերը փախստականների շրջանում:

Միջազգային իսլամական ֆորումներում Ադրբեջանի նախագահի և արտգործնախարարի ելույթներում հստակ է իսլամական հռետորականությունը: Որպես կանոն, Ղարաբաղյան խնդրին անդրադարձ արվում է հենց իսլամական համերաշխության համատեքստում:

---

[1] Speech of Prof. Ekmeleddin Ihsanoglu at the International Conference on the Role of Media in the Development of Tolerance and Mutual Understanding will be held in Baku on April 26-28, 2007, www.bakumedia2007.gov.az/secretary_general.pdf.

[2] Draft Resolution No.7/34.P on the Aggression of the Republic of Armenia Against the Republic of Azerbaijan, http://www.mfa.gov.az/eng/international/organizations/oic/aggression.pdf.

[3] Secretary Generals Report on the Aggression of the Republic of Armenia against the Republic of Azerbaijan, http://www.mfa.gov.az/eng/international/organizations/oic/secretary_general.pdf.

[4] Statement by H.E. Dr. Elmar Mammadyarov, Minister of Foreign Affairs of the Republic of Azerbaijan http://www.mfa.gov.az/eng/spee/31.shtml.

Համագործակցություն արաբական/իսլամական աշխարհի հետ

Բաքուն ծրագրում է սերտորեն համագործակցել Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ բոլոր պետությունների հետ: Վերջին շրջանում Ադրբեջանը զգալի քայլեր է անում՝ բարելավելու հարաբերությունները նաև իսլամական աշխարհի կարևորագույն բաղադրիչ համարվող արաբական աշխարհի հետ, որտեղ շատ դեպքերում հայկական գործոնը որոշակի դերակատարություն ունի: Չնայած 2005թ. Արաբական պետությունների լիգայի հետ Ադրբեջանը ստորագրել է Փոխհամաձայնության հուշագիր, իսկ Լիգայի՝ 2005թ. հոկտեմբերի 16-ին Կահիրեում տեղի ունեցած հանդիպմանը Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Է.Մամեդյարովը խոսել է Ադրբեջանը և արաբական աշխարհը միավորող «պատմական, կրոնական և մշակութային կապերի» մասին՝ հարաբերություններն արաբական աշխարհի հետ այնքան էլ ընդլայնված չեն[1]: Ադրբեջանի պաշտոնատարները մեկ անգամ չէ, որ բացասաբար են արտահայտվել արաբ բարձրաստիճան պաշտոնյաների՝ Հայաստան այցելությունների մասին, որոնք շրջանցում են Բաքուն՝ նկատի ունենալով նաև արաբական մի շարք երկրների (մասնավորապես՝ Լիբանանի և Սիրիայի) Երևանում դեսպանություն ունենալու, իսկ Բաքվում՝ չունենալու փաստը:

Ներկայումս Ադրբեջանը արտակարգ և լիազոր դեսպանի մակարդակով դիվանագիտական հարաբերություններ ունի հետևյալ արաբական երկրների հետ՝ Եգիպտոս, Իրաք, Քուվեյթ, Սաուդյան Արաբիա, իսկ Լիբիայի հետ՝ գործերի ժամանակավոր հավատարմատարի մակարդակով: Ոչ արաբական իսլամական երկրներից Ադրբեջանը դիվանագիտական հարաբերություններ ունի Իրանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի և Պակիստանի հետ:

Իսլամական կոնֆերանսի շրջանակներում Ադրբեջանին աջակցող հիմնական պետություններն են Սաուդյան Արաբիայի Թագավորությունը և Պակիստանը: Սաուդյան Արաբիան Ադրբեջանին աջակցում է որպես իսլամի հայրենիք և իսլամական համերաշխության գաղափարի առաջատար երկիր: Թե՛ Սաուդյան Արաբիան և թե՛ Պակիստանը Հայաստանի հետ չունեն դիվանագիտական հարաբերություններ, ինչը բացառապես պայմանավորված է Ղարաբաղյան հակամարտության հարցում նրանց կոշտ դիրքորոշմամբ: Իսլամական այն երկրները (բացի Սաուդյան Արաբիայից և Պակիստանից), որոնք դիվանագիտական ներկայացուցչություններ ունեն Բաքվում, Հայաստանի հետ նույնպես ունեն դիվանագիտական կապեր: Նշենք, մասնավորապես, արաբական աշխարհում առաջատար դերակատարություն ունեցող Եգիպտոսը, որի հետ Հայաստանը կնքել է երկկողմ համագործակցության բազմակողմ պայմանագրեր գիտության, մշակույթի, կրթության և առևտրի ոլորտներում:

Այսպիսով՝ Ադրբեջանը, որի հեղինակությունն իսլամական աշխարհում որոշակիորեն աճել է, արտաքին քաղաքականության իսլամական ուղղությունը հիմնականում օգտագործում է Հայաստանի դեմ քաղաքական և տնտեսական պատժամիջոցներ կիրառելու, Ղարաբաղյան հարցում աջակցություն գտնելու, ինչպես նաև իսլամական աշխարհի տնտեսական/ֆինանսական ներուժն օգտագործելու նպատակով: Իսլամական ուղղությունն առաջին հերթին արտահայտվում է Իսլամական կոնֆերանս կազմակերպության հետ սերտ համագործակցությամբ: Իսլամական աշխարհի աջակցությունն Ադրբեջանին առաջին հերթին արտահայտվում է ՄԱԿ-ում Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտությանն առնչվող բանաձևերը հօգուտ Ադրբեջանի քվեարկելու հանգամանքով:

Արաքս Փաշայան
«Նորավանք» հիմնադրամ

[1] http://www.mfa.gov.az/eng/spee/21.shtml.

ТУРЦИЯ ГОТОВИТСЯ К ИНТЕРВЕНЦИИ В ИРАК[1]

Министерство иностранных дел Ирака 9 июля выступило с заявлением, в котором обвинило Турцию в том, что Анкара разместила на границе со страной огромную армейскую группировку: порядка 140 тыс. военнослужащих. По словам главы иракского внешнеполитического ведомства Хошияра Зибари, турецкая военная группировка хорошо оснащена и готовится к проведению военной операции на территории Ирака.

Противостояние на турецко-иракской границе продолжается уже несколько месяцев. Официальная причина, по которой Анкара концентрирует войска на границе с Ираком, – проведение военной операции против боевиков Курдской Рабочей Партии (РКК), которые частично базируются на территории иракского Курдистана. (По разным сведениям, на территории северного Ирака в лагерях РРК находятся от 3 до 5 тыс. боевиков.)

Однако ясно, что столь многочисленная войсковая группировка, к тому же усиленная тяжелой техникой, вряд ли нужна для операции исключительно против нескольких тысяч боевиков РКК, прячущихся в горах.

Основная головная боль турецкого генералитета – это усиление иракского Курдистана, и в особенности подготовка к референдуму относительно статуса Киркука.

Курдистан на сегодняшний день ведет политику обособления от федерального центра. В то время как в центральной части Ирака и на юге страны полыхает кровавая гражданская война между шиитами и суннитами, в Курдистане более или менее спокойно. Здесь активно развивают туризм, экономика находится на подъеме. (Стоит отметить, что именно в период, когда Турция начала угрожать интервенцией в Курдистан, здесь один за другим стали происходить кровавые теракты, ответственность за которые берут на себя суннитские организации, хотя не исключена и вовлеченность в подрывную деятельность турецких спецслужб. При этом теракты чаще всего бывают направлены против партийных курдских офисов либо органов правительства Курдистана и имеют иной характер, нежели кровавые взрывы в местах скопления мирных граждан, которые имеют место быть в центральной и южных областях Ирака.)

Столь сильная разница между положением в разных частях Ирака вызывает огромный поток внутренних переселенцев, бегущих из неспокойных регионов Ирака в Курдистан. Сюда направляются также иракские христиане – ассирийцы и армяне, бегущие от террора исламских радикалов. Судя по всему, поток внутренних переселенцев довольно высок, так как в последнее время появляется информация о том, что местные курдские власти стараются уже ограничить возможность переезда на территорию курдской автономии.

Параллельно курдские лидеры наращивают армию пешмерга, собираясь довести ее количество до 190 тыс. *(см. Курды строят огромную армию)*. При этом по боеспособности курдская армия превосходит федеральную и уже используется американцами в некурдских регионах для поддержки своих воинских операций против инсургентов.

Таким образом, если на бумаге Курдистан является автономией в составе федерального государства, то на деле идет сепарирование курдского образования из обломков разрушающегося на глазах Ирака.

Однако в комплексе факторов, тревожащих турецкое руководство относительно усиления курдского фактора, одним из основных на сегодняшний день является Киркук, который стал камнем преткновения в отношениях между Анкарой, Багдадом и Эрбилем (*столица Курдистана*). Именно в Курдистане могут в ближайшее время развернуться весьма драматические собы-

[1] Տարածաշրջանում հնարավոր ռազմական գործողությունների վերաբերյալ տե՛ս նաև *Հավելվածի* «Оборона или наступление?» և «Эван Колманн: «Пока война в Ираке не закончится, вы не увидите крупных операций на Кавказе»» հոդվածները:

тия, причина которых — усиливающееся напряжение в отношениях с Турцией и спорный вопрос о Киркуке.

Киркук является одним из самых спорных и дестабилизирующих факторов в Ираке. Статус этого региона до сих пор не определен. По 140-й статье конституции Ирака статус Киркука и ряда других спорных регионов (которые по большей части связаны именно с Курдистаном, как, например, Ниневийская равнина, на которую претендуют ассирийцы. Часть ассирийских политических движений лоббирует вступление этой области в состав опять же Курдистана, с возможностью создания здесь христианской автономии) должен быть определен на местном референдуме, который должен пройти не позднее 31 декабря 2007 года. Киркук важен не только политически – здесь находится почти половина нефтяных запасов Ирака.

Учитывая то факт, что население Киркука в основном состоит из курдов, нетрудно догадаться, каков будет исход референдума. Стоит отметить, что во времена Саддама Хусейна курдов отсюда насильно изгоняли, чтобы освободить от них богатые нефтью районы. Однако после оккупации Ирака курды в огромном количестве при попустительстве американцев начали возвращаться в Киркук, изменяя демографическую ситуацию в свою пользу.

Если Киркук перейдет Курдистану, то курды получат последний экономический козырь в игре на образование собственного независимого государства. При имеющихся тенденциях Ирак может развалиться в ближайшие годы. А Курдистан на сегодняшний день уже является все более укрепляющимся государством внутри разваливающегося бесформенного образования.

Уже в январе этого года турецкие власти выражали крайнюю обеспокоенность, близкую к нервному потрясению. Так, премьер-министр Турции Реджеп Тайип Эрдоган 15 января заявил, что референдум в Киркуке может стать началом регионального конфликта: «Турция не может сидеть сложа руки и наблюдать за тем, как происходит перемена демографической структуры в Киркуке». Анкара требует от иракских властей пролонгировать решение о референдуме по статусу Киркука и передвинуть его минимум на 5 лет. И Эрдогана ясно показывает приоритеты Анкары: «В настоящее время Ирак для нас приоритетнее переговоров о вступлении в Евросоюз».

В связи с этим в течение последних нескольких месяцев турецкая армия концентрируется на границе с Ираком. За последние недели неоднократно поступала информация о том, что турецкая артиллерия и авиация наносят удары в глубину иракской территории. При этом турецкие, израильские и курдские СМИ сообщают о потерях как в живой силе, так и в авиации и тяжелой технике.

Однако пока что и власти Курдистана, и федеральное правительства Ирака делают вид, что реальная военная операция не началась. Того же мнения придерживается турецкий генералитет, который уже одобрил план широкомасштабной операции и ждет лишь официального решения со стороны кабинета министров и парламента. По сообщениям турецких СМИ, генералитет намерен на первых порах создать буферную зону длиной в 120 и шириной в 15 км по обе стороны границы. Теперь вопрос стоит лишь за тем, когда начнется война – до выборов в Турции, которые пройдут 22 июля, или после.

Курдские власти со своей стороны грозятся устроить туркам кровавую баню, если они перейдут границу и приступят к широкомасштабной воинской операции. Президент Ирака Джалал Талабани (является одним из лидеров курдского сопротивления времен правления Саддама Хусейна) заявил, что если турки решатся на военную операцию, то это будет воспринято как агрессия против всего Ирака.

Одновременно активизируются столкновения турецкой армии с боевиками Курдской Рабочей Партии на востоке Турции. Стоит отметить, что, судя по настроениям в курдских партийных СМИ, сейчас идет серьезное сближение между кровными врагами – РКК и Демократической партией Курдистана Масуда Барзани, который ныне является президентом курдской автономии. Таким образом, весьма вероятно, что в случае начала серьезного конфликта с Турцией курды смогут действовать слаженно и боевики Оджалана смогут открыть второй фронт в восточных вилайетах Турции, тем самым заставив турецких военных воевать в двух направлениях. Кроме того, в арсенале РКК всегда находится асимметричное оружие – террористические

действия в курортных регионах Турции. С учетом того, что Анкара намерилась начать операцию против курдов летом, в разгар туристического сезона, удар по экономике Турции в случае начала волны терактов одновременно с усилением нестабильности в регионе может оказаться колоссальным. В этом случае все будет зависеть от способности турецких спецслужб не допустить массовости терактов, так как опыт последних лет показал, что единичные взрывы в курортной зоне не наносят какого-либо серьезного ущерба туристическому имиджу Турции.

В то же время Соединенные Штаты периодически дают понять Турции, что не намерены мириться с возможностью турецкой интервенции в Ираке. Так, 9 июля официальный представитель Белого дома Тони Сноу предостерег Анкару от подобных действий. Озвученная официально политика Вашингтона в отношении курдского вопроса такова: Турция может спокойно громить боевиков РКК на своей территории, и США будут закрывать глаза на массовые нарушения прав человека, которыми сопровождаются операции против боевиков в курдонаселенных вилайетах. Но при этом Анкара не должна мечтать о возможности оккупировать часть территории Ирака и вновь стать действующим актором в этом направлении, где теперь доминирующей силой должны быть американцы без какого бы то ни было медиатора, в качестве коего ранее в регионе выступала как раз Турция.

Самвел Мартиросян

ԾՊՏՅԱԼ ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ

Հրանտ Դինքի սպանությունը, դրան առնչվող դեպքերը, ինչպես նաև օրերս սկսված դատավարությունը շարունակում են կարևոր տեղ զբաղեցնել Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառներում: Օրինակ, «Մենք բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինք ենք» կարգախոսն այնպիսի խորությամբ է խոցել թուրքերի «ազգային ինքնագիտակցությունը», որ ամեն պատեհ և անպատեհ առիթով դա հիշվում ու մեջբերվում է, և ի պատասխան՝ բազմաթիվ հակընդդեմ կարգախոսներ են մեջտեղ հանվում: Հենց միայն նշված կարգախոսի պատճառով գրվել են բազմաթիվ հոդվածներ, քաղաքական շատ գործիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ անդրադարձել են դրան և մեկնաբանություններ արել, որոնք գերազանցապես մերժողական բնույթ ունեն: Այնքան ընդգծված են թուրքական հասարակության տարբեր շերտերում հնչող բուռն արձագանքները հիշյալ կարգախոսի դեմ, որ «Միլլիեթ» օրաթերթի լրագրող Էջե Թեմելքուրանը սարկաստիկ շեշտադրումներ ունեցող իր՝ «Եկել է բացահայտման ժամանակը. *HHD* հայկական գաղտնի կազմակերպությունը» հոդվածում, նկատի ունենալով Դինքի թաղման արարողությունը և այդ ժամանակ հնչած արտահայտություններն ու դրանից հետո սկիզբ առած ծայրահեղական մեկնաբանությունները, նկատում է, որ շատերը, անհանգստանալով «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ Դինք ենք» կարգախոսից, ենթադրում են, որ դա նորաստեղծ հայկական կառույցի ձեռնարկած գործն է: «Կառույցն ունի 100.000 ակտիվ անդամ և մոտ 200.000 համակիրներ: Այն ստեղծվել է ընդամենը մեկ օրում, և նրա նպատակն է մասնատել Թուրքիան, մոռացության դատապարտել թուրքական ինքնությունը, մուսուլմանական հավատը»,- նկատում է հոդվածագիրը և ծաղրանքով նշում, որ եկել է արդեն այս գաղտնի երևույթի մասին բարձրաձայնելու ժամանակը. «Հայկական այդ կառույցի անունն է *HHD*, այսինքն՝ *«Hepimiz Hrant Dinkiz»* («Բոլորս Հրանտ Դինք ենք» արտահայտության հապավումը- *Ռ.Մ.*): Սարկազմով և հեգնանքով շաղախված այս հոդվածը ցույց է տալիս, որ Թուրքիայի քիչ թե շատ առաջադեմ կամ այդպիսին համարվող որոշ մարդիկ և ուժեր անգամ նկատում են հայտնի կարգախոսի առաջացրած ծայրահեղական, բայց թուրքական իրականության համար լիովին համարժեք արձագանքը:

Դինքի սպանությունը և թաղման բազմահազարանոց արարողությունը ոմանք կապեցին նաև Թուրքիայում ապրող ծպտյալ հայերի հետ՝ նշելով, որ այն ինչ-որ առումով շրջադարձային դեր ունեցավ վերոհիշյալ հայերի համար: Այսօր այդ կարծիքը գնալով լայն տարածում է գտնում, ու արդեն շատերը Դինքի սպանությունը և թաղման արարողությունը համարում են ծպտյալ հայերի զարթոնքի նշան[1]: Մամուլում և զանազան վերլուծություններում կարծիքներ են հնչում, որ ծպտյալ հայերը մեծ թիվ են կազմում նաև պետական համակարգում, ինչպես նաև մասնավոր սեկտորում: Օրինակ, «Հեղափոխության պատմության ինստիտուտի» նախկին տնօրեն, դոկտոր, պրոֆեսոր Հասան Քյոնին հետևյալ կարծիքն է հայտնում. «Այն հայ երեխաները, որոնց ընտանիքները մահացել էին աքսորից առաջ, տրվում էին թուրքերին, մի մասը մուսուլման էր դառնում, մի մասին ամուսնացնում էին, մի մասն ամբողջովին ձուլվում էր, և նրանց թիվը պակասում էր, սակայն մեր օրերում, անշուշտ, կան ծպտյալ հայեր և այն էլ

[1] Թուրքիայում հետզհետե ավելի շատ է քննարկվում ու սևեռուն դառնում «կրիպտո հայերի» խնդիրը, և անգամ Եվրատեսիլ երաժշտական մրցույթի ժամանակ Հայաստանը ներկայացնող երգիչներին Թուրքիայի կողմից բարձր քվեներ տալը շատերը կապում են ծպտյալ հայերի հետ՝ պատճառաբանելով, որ հենց նրանք են քվեարկել իրենց ազգակիցների օգտին: Այստեղ ավելորդ չէ նշել, որ Թուրքիայի հեռախոսային օպերատորները նույնիսկ ուսումնասիրում էին, թե հատկապես որ շրջաններից են ուղարկվել այդ *sms*-ները:

զգալի թվով: Մենք ունենք նաև հայկական արմատներով հավատափոխ քաղաքացիներ, որոնք պետության մեջ կարևոր պաշտոնների են հասել»:

Դինքի մահը որպես ծպտյալ հայերի զարթոնք ներկայացնելու թեզը հատկապես ակտիվ է պաշտպանում Թուրքիայի Ինենյու համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սալիմ Ջյոհջեն, որն առաջիններից էր, որ հայտարարեց, թե «Դինքի սպանությունը «ծպտյալ» հայերի համար հայտնություն էր»: Այս պատմաբանը, որ շուրջ 25 տարի զբաղվում է նաև հայկական խնդրով, վերջերս թուրքական «Բարեմ» հանդեսին տված հարցազրույցում, շարունակելով ծպտյալ հայերի թեման, կարծես, մանրամասնում է նախորդ հարցազրույցում արտահայտած մտքերը և հավելում նորերը: Ստորև թարգմանաբար և որոշ կրճատումներով ներկայացնում ենք հիշյալ հարցազրույցը:

«ՄԻՆՉԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՍԿՍՎԵԼՈՒ Է ՀԱՅԿԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ»

- Ի՞նչ առումով եք Հրանտ Դինքի սպանությունը «ծպտյալ» հայերի համար հայտնություն համարում:

- Հայտնի է, որ Եվրամիության անդամակցության գործընթացը ոգևորել և աշխուժացրել է Թուրքիայի ազգային փոքրամասնություններին, և այս առումով շատ բնական են մեր հայ քաղաքացիների՝ որոշակի հարցերում գործադրած բացահայտ ջանքերը: Դրանց թվին պետք է դասել եկեղեցի վերաբացելու պահանջը, դատարաններին ուղղված մի շարք դիմումները, կալվածքների վերաբերյալ գնալով ուժեղացող պահանջները և այլն: Սակայն ուշագրավ է այն հանգամանքը, որ 20-րդ դարի սկզբին այս կամ այն պատճառով իսլամ ընդունած հայկական ծագմամբ մեր քաղաքացիների ուղղությամբ տարվող աշխատանքները վերջին ութ-տասը տարիներին ապշեցնող թափ են ստացել: Այսպիսի զարգացումը չէր կարող ի հայտ գալ հենց այնպես, և պարզ է, որ սրա հիմքում ապագային միտված մի շարք հաշվարկներ կան: Թուրքերի հետ հաշիվներ պարզելու, նրանցից վրեժ լուծելու և, ի վերջո, «դրախտային Հայաստանը» վերակերտելու նպատակները, մինչև 1980-ականների կեսերը հայերի, հիմնականում սփյուռքահայերի մեծ մասի՝ այս տարածքների հանդեպ ունեցած հետաքրքրությունը ցանկանում էին իրականացնել հետևյալ ռոմանտիկ մոտեցմամբ. հատկապես արևելյան Անատոլիայում վերստեղծել գործուն հայկական ներկայություն՝ այն դարձնելով հենասյուն նպատակի իրագործման համար: Այլ կերպ ասած, հետևելով անցյալում Իսրայելի օրինակին՝ ժամանակային որոշակի ընդմիջումներով դրսից բերվող բնակչությամբ ստեղծել մի նոր հայրենիք: Սակայն այս միտքն անիրագործելի դարձավ՝ բախվելով այն իրողության հետ, որ ներկայումս նույնիսկ Հայաստանի բնակչությանն իր տեղում չեն կարողանում պահել: Մեր օրերում, օգտվելով որոշակիորեն փոփոխված պայմանների ընձեռած հնարավորություններից, այլ ուղիներ են հետապնդվում: Այդ պատճառով ոչ հեռու անցյալում Թուրքիայում սկսվեցին կրկին տեղացի հայ բնակչություն ձևավորելու աշխատանքները՝ այս անգամ հիմք ընդունելով էթնիկ ծագումը: Ակնհայտ է նաև, որ այս հարցում բավական հաջողության են հասել: Այսպես, օրինակ, Ալի, Ահմեթ, Մեհմեթ, Հասան, Հուսեյն անուններ կրող և մինչ այդ իրենց ազգային ինքնությունը թաքցնող հայկական ծագմամբ բավական շատ քաղաքացիներ այս սպանությունից շատ կարճ ժամանակ անց, հիմնականում Ստամբուլում և որոշ քաղաքներում, ի հայտ եկան որպես իրենց անելիքը շատ լավ իմացող, գիտակից միասնություն: Իհարկե, առանձին ուսումնասիրության կարոտ հարց է, թե արդյոք սպանված Հրանտ Դինքը և առնվազն նրա մերձավոր շրջապատը այս ամենի մեջ որոշիչ ազդեցություն ունեն, թե ոչ: Ի դեպ, Դինքը թե՛ տարբեր ամսագրերին տված մեկնաբանություններում, թե՛ Հայաստանում ունեցած իր մի ելույթում պնդել է, որ Թուրքիայում կան իսլամացված հայեր և նույնիսկ շեշտել է, որ նրանց թիվը հասնում է 500.000-ի սահմաններին (ես նույնպես հակված եմ սրան մոտ մի թիվ ենթադրել): «Կրիպտո» հայերի հանկարծահաս բնազդով, միանգամից երևան գալը, գրեթե վերակենդանանալը, իմ կարծիքով, հայտնություն է և հեռուն տանող ծրագրերի տեսանկյունից՝ մի կա-

րևոր սկիզբ: Երբ ուշադիր ուսումնասիրում ես Ստամբուլում կատարված թաղման արարողությունը և որոշ նահանգներում իրականացված գործողությունները, այս հանգամանքը բացահայտ երևում է: 2015թ., այսինքն՝ աքսորի և տեղահանության որոշման ընդունման 100-ամյակի մոտենալն էլ «կրիպտո» հայերի խնդրում առկա սպառնալիքները բավական մեծացրել են: Փոքր-ինչ մանրամասնեմ. մինչև 2015թ. հատկապես արտերկրի հայերն ամեն ինչ անելու են շատ պետությունների խորհրդարաններում Թուրքիայի դեմ մի շարք քաղաքական որոշումներ ընդունել տալու համար: Առնվազն հիմա այս որոշումներն իրականում ոչ մեկին օգուտ չեն տալիս: Սակայն ցեղասպանության օրինագծերի տարածման հետևանքով ձևավորվող պատկերը հրահրիչ ազդեցություն է ունենալու ներկայումս էլ ծրագրված գործող և վրեժ լուծել ցանկացող մի շարք մարդկանց շրջանում: Այս հնարավոր ազդեցության մասին մտածելն անգամ սարսափելի է: Այն միաժամանակ հող կնախապատրաստի, որպեսզի փոքրամասշտաբ սադրանքն անգամ վերածվի սարսափելի զինված ալիքի: Մի պահ մտածեք. զինված հարձակման դիմած որևէ հայի գործողությունը շատ երկրներում որպես ահաբեկչություն չեն դիտելու, որովհետև առկա են լինելու իրենց խորհրդարաններում ընդունված ցեղասպանության օրինագծերը: Բացի դրանից, մինչ այդ հայերի «ցեղասպանության զոհ» լինելու միտքն այդ երկրների հասարակական կարծիքի մեջ լայնորեն արմատավորված կլինի: Հայերի զինված ելույթները կդիտվեն որպես «ինքնապաշտպանություն, իրավունքին տեր կանգնել կամ էլ ազգային ազատագրական շարժում»: Ուստի ես կարծում եմ, որ ապագայում՝ հավանաբար սկսած 2013-2014 թվականներից, հատկապես «կրիպտո» հայերի կողմից Թուրքիան ենթարկվելու է բացահայտ կամ էլ թաքուն հարձակման, որն անցյալ դարի սկզբներին տեղի ունեցածներից շատ ավելի տարբեր է լինելու:

- Ըստ ձեզ, Դինքի սպանության համար ընտրված ժամանակն ինչ-որ նշանակություն ունե՞ր:

- Ոմանց համար շատ հարմար ընտրված ժամանակ էր: Այստեղ, նախ, անհրաժեշտ եմ համարում շեշտել մի հանգամանք. ես չեմ հավատում, թե մեր երկրում պատահական ինչ-որ դեպք տեղի ունենա, ներառյալ և Հրանտ Դինքի սպանությունը: Այնպես է, որ Թուրքիայում ամեն ինչ ծրագրված, նախագծված և որոշակի կարգով է իրականացվում, առանց ոմանց ցանկության և կամքի՝ սովորաբար ճյուղի տերևն անգամ չի շարժվում: Բացի այդ, սպանությունից հետո ի հայտ եկած զարգացումները ցույց են տալիս, որ 100-ամյակի քաղաքական հիմքերը մեծ հաշվով արդեն ձևավորվում են: Թեկուզ փոքրաթիվ, այնուամենայնիվ որոշ մտավորականներ, գրող-նկարիչներ բացահայտ հայտարարեցին, որ ամոթ են զգում թուրք լինելու համար: Ժողովրդի միջից շատերը, որոնք այս հարցում կասկած չունեին և հիմք ընդունելով ընտանիքի ավագներից լսածները՝ հայտարարում էին, թե «այս վայրերում հայերը հարազատներիս, համաքաղաքացիներիս կոտորել են, մենք էլ նրանց մի ուրիշ վայրում ուժով գերազանցել ենք, այս ենք արել և այլն», արդեն սկսել են ասել՝ «մենք հայերին կոտորել ենք»: Համառորեն աշխատում են թուրքական հասարակությանը մեղավորության զգացումով համակել: Այս բանի դեմ հանդես գալու մեծ հնարավորություն ունեցող և իրականում էլ դեմ դուրս եկող իսկական թուրք ազգայնականներին էլ ինչ-որ կերպ սպանության հետ կապելով ու թիրախ ներկայացնելով՝ ցանկանում են նրանց զրկել ազդեցության լծակներից: Այսպիսով նպատակ է հետապնդվում ապագայի հայկական գործունեության համար թե՛ երկրի ներսում և թե՛ դրսում կանաչ ճանապարհ բացել՝ ստեղծել խելամտության սահմաններն անցնող հանդուրժողականության, բարյացակամության, անդիմադրողականության մի մթնոլորտ: Կապ ունենան, թե չունենան, շատ դեպքերի համար թուրք ազգայնականներին պարբերաբար մեղադրելը մինչև այսօր ցանկալի արդյունք չի տվել: Սակայն Դինքի սպանության պատրվակով բարձրացված աղմուկը Թուրքիայում ապրող և մինչև այսօր իրենց իրական ինքնությունը թաքցնող հայերի գործունեությունը խթանելու և նախաձեռնվող զինված ելույթների համար «հարմար մի մթնոլորտ»-ի հասնելու տեսանկյունից կարևոր է:

- Կրիպտո հայերի և նրանց գործունեության հետ կապված պաշտոնական տվյալներ կա՞ն:

- Չգիտեմ, սակայն անհրաժեշտ է, որ լինեն: Հայտնի է, որ հատկապես աքսորի և տեղահանության ժամանակաշրջանում օսմանյան հպատակ մոտ 100.000 հայեր իսլամ են ընդունել:

Հայտնի է նաև, որ ավելի ուշ նրանց մի մասը նախկին կրոնին է վերադարձել: Բացի սրանից, կան զգալի թվով մարդիկ ևս, որոնք արտաքուստ մուսուլման են երևում, սակայն իրականում շարունակում են քրիստոնյա-գրիգորյան սովորույթները: Թեկուզ հայտնի է, որ նրանք իրենց շրջապատում միմյանց հայկական անուններով են դիմում, սակայն դրսում և պաշտոնական փաստաթղթերում թուրքական անուններ օգտագործելու վրա հատուկ ուշադրություն են դարձնում: Ըստ իմ դիտարկումների՝ հատկապես վերջին տնտեսական դժվարությունների ժամանակ որոշ «կրիպտո» հայերի ընտանիքներին ինձ անհայտ մի աղբյուրից զգալի չափով օգնություն է ցուցաբերվել: Այս բոլոր գործողություններն իրականացվում են նաև Ստամբուլի հայերի ջանքերով: Օրինակ, մի քաղաքացի կա, բժիշկ է, սակայն իր մասնագիտությամբ չի զբաղվում, իրեն նվիրել է այդ (ծպտյալ հայերին օգնելու- *Ռ.Մ.)* գործին: Ամեն ամիս 15 օրով գալիս է Մալաթիա, առանձին-առանձին այցելում որոշակի մարդկանց: Հետևողական ձևով հանդիպում է, օգնում նրանց խնդիրները լուծելուն: Այստեղ ուշագրավ է, որ այն մարդիկ որոնց նա հանդիպում է, միանգամից սկսում են տնտեսապես զարգանալ:

- Տեղեկություններ կա՞ն ծպտյալ հայերի թվաքանակի մասին:

- Թուրքիայում ծպտյալ հայերի թվի մասին խոսելիս անհրաժեշտ է կանգ առնել նաև հայ որդեգիրների փաստի վրա: Աքսորյալների կամքով հարևաններին կամ էլ մտերիմներին թողնված երեխաներից և աքսորի ճամփին ինչ-որ ձևով իրենց ընտանիքներից բաժանված և պատասխանատուների կամ էլ նրանց միջնորդությամբ բարեհոգի մարդկանց կողմից խնամքի տակ վերցված երեխաներից ձևավորվել է որդեգիրների մի մեծ խումբ, որոնցից շատ քչերն են ավելի ուշ իրենց ազգակիցների հետ ամուսնացել: Գերակշիռ մասը թուրքերի կամ էլ քրդերի հետ է ամուսնացել, և այս ճանապարհով ձևավորված բնակչությունը, ենթադրում եմ, որ ներկայումս մոտ 200.000 է կազմում: Սակայն քանի որ այսօր Թուրքիայում «թուրք» հասկացողությունը որոշ հատվածների համար շատ մեծ կարևորություն չունի, սրանց մի մասն ըստ էության ինքնության փնտրտուքի մեջ է: Օրինակ, ներկայումս նկատվում է, որ այն մարդկանց մեջ, որոնց միայն մայրն է հայ, հայկական ինքնության գիտակցությունն ավելի առաջնային է: Բացի սրանից, ես կարծում եմ, որ աքսորից փրկվելու համար կամ էլ անկեղծորեն իսլամ ընդունածները մոտ 400.000 են կազմում: Ծպտյալ հայերը սրանց և 200.000 որդեգիրների մոտ 40%-ն են կազմում:

- Այս թիվը արդյո՞ք բավարար է Թուրքիայում ահաբեկչական գործունեություն ծավալելու համար:

- Ես կարծում եմ, որ հայերի զինված շարժումը սկիզբ է առնելու քաղաքներից: Հատկապես արևելյան և հարավարևելյան անատոլիական որևէ քաղաքում որոշակի գործողություններ իրականացնելու համար 10-12.000-անոց գաղութը բավարար է: Ըստ էության, տարածաշրջանի քաղաքներում մոտավորապես այս քանակությամբ ծպտյալ հայեր կան:

- Կարելի՞ է հայերի ծրագրած պարտիզանական շարժումը կապել PKK ահաբեկչական կազմակերպության հետ:

- Պարտիզանական շարժման հիմքում ընկած է երեք փուլ. նախապատրաստություն և քաղաքական հենարանի ձևավորում, զինված ելույթներ և հարցի քաղաքականացման ճանապարհով արդյունքի հասնել: Պարզ է, որ ներկայումս ավարտին է մոտենում քաղաքական հողի նախապատրաստման փուլը: *PKK-ն* սա 1980-ից առաջ էր սկսել և ավելի ուշ՝ ահաբեկչության փուլին անցել: Ես կարծում եմ, որ հայերն այս հարցում բավական փորձ են ձեռք բերել: Չէ՞ որ հայտնի փաստ է, որ զգալի թվով հայեր անցյալում ներթափանցել են ձախակողմյան կազմակերպություններ և նույնիսկ որոշ ժամանակաշրջանում ձևավորել են այդ կազմակերպությունների ղեկավար կազմը: Գալով հայերի և *PKK* հարաբերություններին՝ ասեմ, որ այս երկու խմբերի սերտ համագործակցությունն ակնհայտ է: Այս իրողությունը վերջին թաղման արարողության ժամանակ իրեն զգալ տվեց:

- Հայերը կապ ունե՞ն այլ ահաբեկչական կազմակերպությունների հետ:

- Հայերը *PKK-ին* զուգահեռ և՛ *DHKP-C-ում* («Հեղափոխական ժողովրդական ազատագրության կուսակցության ճակատ»), և՛ *TIKKO-ում* («Թուրքիայի բանվորագյուղացիական ազատագրության բանակ») շարքերում բավական ազդեցիկ տեղ են գրավել: Երբ անդրադառնում ենք վերոհիշյալ ձախակողմյան կազմակերպություններին, հատկապես դրանց ղեկավար կազմին, ապա անմիջապես ուշադրություն է գրավում ծագումով հայերի ակտիվությունը: Այստեղ անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այլ ինքնության տակ այս կազմակերպություններում գործողների վրա: Օրինակ, Դինքն ասում էր, որ հատկապես ալևի քրդերն իրենց կողմից փրկված շատ հայերի որդեգրել են: Էրզրումի նախկին պատգամավորներից մեկը բացահայտեց, որ հայերի մի մեծ խումբ քրդանալով միացել է իրենց աշիրեթներին (ցեղերին), և այս փաստը պատմական փաստաթղթերով էլ է ապացուցվում: Սրան զուգահեռ՝ Հրանտ Դինքի կինը՝ Ռաքելը, նույնպես նախկինում քրդացած, հետո իր իսկական ինքնությանը վերադարձած մեկն է: Հայտնի է նաև, որ այսօր էլ արևելյան Անատոլիայում քրդացած կամ էլ քրդական ինքնության տակ իրենց գոյությունը շարունակող մեծ թվով հայեր կան, որոնք մի շարք կազմակերպությունների նախաձեռնած զինված ելույթներում էլ ակտիվ դեր են ստանձնում:

- Ո՞րն է 100-ամյակի հետ կապված այս բոլոր ծրագրերի նպատակը:

- Նպատակը հստակ է. աքսորի և տեղահանության որոշման, նրանց բնորոշմամբ՝ «ցեղասպանության» համար վրեժը լուծել և «դրախտային Հայաստան» ստեղծել:

- Իսկ ինչպիսի՞ նախապատրաստական քայլեր պետք է անի Թուրքիան ընդդեմ ապագայում հնարավոր հայկական ահաբեկչության:

- Օրինակ, մենք կարող ենք գործը սկսել Ավստրալիայում, Կանադայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում կրթություն ստացող մեր հայ քաղաքացիների թվաքանակի և արտասահմանում նրանց կատարած գործունեության մասին տեղեկություններ հավաքելով: Եթե մի օր նրանք Թուրքիա են վերադառնալու, կարևոր է իմանալ, թե այդ մարդիկ ինչ կրթություն են ստացել և ձեռք բերած գիտելիքներն ինչ կերպ են ուզում կիրառել: Հայտնի է, որ անցյալում հայ կոմիտեականները ևս արտասահմանում կրթություն էին ստանում և վերադառնում Թուրքիա:

- Կա՞ն արդյոք քաղաքներ, որոնք հայերը զինված հարձակման ծրագրի տեսանկյունից կարևոր են համարում:

- Իհարկե, կան. Մալաթիան, Էրզրումը, Սեբաստիան այս տեսակետից շատ կարևոր են: Սրանք հանգուցային նշանակության քաղաքներ են: Մարաշը նույնպես շատ կարևոր է: Պատմության շրջադարձային դեպքերը միշտ այս տարածքներում են իրականացվել, սրանից հետո էլ է այդպես լինելու: Այս տարածքը պահելը շատ դժվար է:

Թուրքերենից թարգմանեց
Ռուբեն Մելքոնյանը

«ԿԱՆ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐ, ՀԱՏԿԱՊԵՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԵՋ, ՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ԲԱՑԱՀԱՅՏ ՀԱՅ ԵՆ ՀԱՄԱՐՈՒՄ»

Հարցազրույց Ստամբուլում բնակվող համշենցի Քայել Մարգարօղլուի հետ

- *Ի՞նչ կարող ես ասել ներկայիս Թուրքիայում ապրող համշենահայերի քանակի մասին:*

- Թուրքիայում ներկայումս մոտավորապես 50.000 համշենցի է ապրում: Համշենցիների մի մասն ապրում է Սև ծովի արևելյան ափերին, մի մասը՝ Ադափազարի շրջանում, համշենցիներ կան նաև Թուրքիայի խոշոր քաղաքներում՝ Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում:

- *Ինչպիսի՞ն է լեզվի վիճակը, պահպանվե՞լ է արդյոք Համշենի բարբառը:*

- Երևի գիտեք, որ համշեներենը[1] ներկայումս միայն Հոփայի խմբի համշենցիների մոտ է պահպանվել, մյուս խումբը՝ չամլըհեմշինցիները, իրենց լեզվում պահպանել են որոշ բառեր, անձնանուններ, տեղանուններ, ինչպես նաև մշակութային տարրեր: Մենք՝ Հոփայի խմբի համշենցիներս, նախկինում թուրքերեն իրականում սովորում էինք միայն դպրոցում, իսկ տանը գերազանցապես համշեներենն էր օգտագործվում: Հիմա էլ վիճակն ընդհանուր առմամբ այդպես է, սակայն վերջին տարիներին, այնուամենայնիվ, որոշ փոփոխություններ նկատվում են: Այսպես. որպեսզի երեխաները դպրոցում շատ հետ չընկնեն, հիմա սկսել են նաև տանը նրանց հետ ավելի շատ թուրքերեն խոսել և, օրինակ, ներկայիս երեխաներն իմ սերնդի չափ համշեներեն չգիտեն: Բացի այդ, թուրքական հեռուստաալիքները, ֆիլմերը ևս նպաստում են թուրքերենի ավելի շատ օգտագործմանը: Սակայն հիմա էլ ավագ սերնդից մարդիկ կան, որոնք գրեթե չեն կիրառում թուրքերենը, դա կապված է նաև նրանց կյանքի ներփակ բնույթի հետ, իսկ երիտասարդների շրջանում, որոնք սովորում են համալսարաններում կամ աշխատում են մեծ քաղաքներում, վիճակն այլ է: Վերջերս նկատվում է մեկ այլ միտում ևս. նրանք, ովքեր իրենց էթնիկ պատկանելության մասին գիտեն, անպայման ջանում են սովորել և կիրառել համշեներեն, ավելին՝ այն սովորեցնել իրենց երեխաներին:

- *Համշենցիների մյուս խումբը՝ արևմտյանը, ինչպե՞ս է, որ չի պահպանել իր մայրենին՝ ի տարբերություն Հոփայի խմբի:*

- Իմ ենթադրությամբ՝ դա կարող է կապված լինել այն հանգամանքի հետ, որ Հոփայի խումբն ավելի շատ բնակվում է գյուղերում, քաղաքների հետ շատ առնչություն չունի, այսինքն՝ ավելի ներփակ են ապրում, և միայն վերջին 20 տարիներին է, որ սկսել է հարաբերվել դրսի աշխարհի հետ: Կյանքի այս ներփակ բնույթը, ներքին ամուսնությունները և այլն նպաստել են լեզվի պահպանմանը: Մյուս ենթադրությունս այն է, որ մեր խումբն ավելի ուշ է մուսուլմանություն ընդունել, իսկ արևմտյանը՝ ավելի վաղ, և լեզվի կորուստը միգուցե նաև դրա հետ կարելի է կապել:

- *Ինչպե՞ս են հարաբերությունները երկու խմբերի միջև:*

- Լավ են, սակայն մի բան ասեմ. երբ համշենցիների հայ լինելու մասին քննարկումներ կամ վեճեր են սկսվում, արևմտյան համշենցիներն ասում են. «Ոչ թե մենք, այլ Հոփայի համշենցիներն են հայ»:

[1] Տեքստում միտումնավոր թողել ենք «համշեներեն» եզրը, քանի որ այդպես էր օգտագործում մեր զրուցակիցը (Ռ.Մ.):

- Ինչպիսի՞ն է կրոնի դերը համշենցիների մոտ:

- Հայտնի է, որ Թուրքիայի համշենցիները մուսուլման են, բայց իսլամը շատերիս համար մեծ կարևորություն չունի, կրոնն ավելի շատ ֆոն է, այն մեր առօրյա կյանքի վրա շատ մեծ ազդեցություն չունի, շատ կրոնասեր չենք: Նշեմ, որ համշենցիները չեն հետևում իսլամի որոշ սկզբունքների, օրինակ՝ խմում են ալկոհոլային խմիչքներ, խոզի միս ուտում, մզկիթ հաճախ չեն գնում: Համշենցիները քրիստոնյա եղած ժամանակ էլ շատ կրոնամոլ չեն եղել: Ավելացնեմ նաև, որ Համշենում մզկիթներ սկսել են կառուցել առավելապես վերջին երկու տասնամյակում: Սակայն կարծում եմ, որ համշենցիների կրոնի մեջ և առօրյա կյանքում քրիստոնեության որոշ տարրեր, այնուամենայնիվ, մինչև հիմա էլ կան:

- Այո, հայտնի է, որ քրիստոնեության և նախաքրիստոնեական հայկական հավատքի որոշ տարրեր կան համշենցիների մոտ, հենց միայն, օրինակ, վարդավառը, տրընդեզը: Իսկ ուրիշ ի՞նչ այլ հետաքրքիր օրինակ կարող ես նշել:

- Օրինակ, հարսանիքից հետո տուն մտնելիս փեսան դռան վերևը դանակով խաչ է գծում, ավելի ճիշտ՝ ոչ թե խաչ, այլ խաչը խորհրդանշող չորս խազ է անում:

- Իսկ ինչպիսի՞ն է ազգային ինքնագիտակցության խնդիրը համշենցիների մոտ:

- Երիտասարդները և կրթված, գրագետ մարդիկ ինքնության խնդիրը գիտեն, տեղյակ են, մեծահասակների մի մասն այդ փաստը չի ընդունում, սակայն սա կարող է պայմանավորված լինել նաև անտեղյակությամբ: Նշեմ, որ հատկապես Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ հայաստանցի հայերը սկսեցին Վրաստանի տարածքով Թուրքիա գալ-գնալ, և երբ համշենցիները սկեցին շփվել, խոսել, տեսան, որ լեզուն նույնն է, նրանց մոտ ինչ-որ բան փոխվեց, ինչ-որ բան սկսեցին հասկանալ: Սակայն կան համշենցիներ, հատկապես երիտասարդների մեջ, որոնք իրենց բացահայտ հայ են համարում:

- Իսկ իրական էթնիկ պատկանելությունը մերժելու գործում արդյոք դեր չունի՞ Թուրքիայում ձևավորված վախի մթնոլորտը:

- Ես կարծում եմ, որ դա ոչ թե այժմյան վախի մթնոլորտի, այլ ավելի շատ անցյալի, այսինքն՝ ենթագիտակցական մի վախի ազդեցության արդյունք է: Կան համշենցիներ, որոնք, իմանալով հանդերձ իրենց իրական էթնիկ պատկանելությունը, աշխատում են այդ մասին շատ չխոսել՝ խուսափելու համար ավելորդ բարդություններից. օրինակ՝ թուրքի հետ առևտրով զբաղվող կամ համատեղ բիզնես ունեցող մարդուն դա կարող է և վնաս պատճառել, այսինքն՝ ուղղակի ճնշումներ չկան, բայց այսպիսի անուղղակի ճնշումներ հնարավոր է լինեն: Մի խումբ համշենցիներ էլ մտածում են, որ միևնույն է՝ այսքան դարեր են անցել, իրենք փոխվել են, հիմա վեր կենան, ասեն հայ են, ի՞նչ պիտի փոխվի:

- Ամուսնության խնդիրը ինչպե՞ս է համշենցիների մոտ, պահպանվո՞ւմ է արդյոք ներքին ամուսնությունների ավանդույթը, թե՞ դա արդեն խախտվել է:

- Ներկայումս էլ շատ են ներքին ամուսնությունները, նախկինում ընդհանրապես դրսից ոչ մեկի հետ չէին ամուսնանում: Սակայն վերջին տարիներին վիճակը մի փոքր փոխվել է, հատկապես մեծ քաղաքներում ապրող երիտասարդներն ամուսնանում են թուրքերի, քրդերի, մի խոսքով՝ օտարների հետ, սակայն Համշենում այդպես չէ և ամուսնանում են գերազանցապես համշենցիների հետ. օրինակ՝ իմ եղբայրը, որ ապրում է Համշենում, ամուսնացել է համշենցու հետ, իսկ Ստամբուլում ապրող քույրս՝ քրդի հետ:

- Իսկ Թուրքիայի հայերի հետ ամուսնանո՞ւմ են:

- Գիտես, մենք Թուրքիայի հայերին նախկինում շատ չէինք ճանաչում, շփվում, նոր-նոր է, որ սկսում ենք իրար ճանաչել: Նրանք էլ են սկսել հետաքրքրվել համշենցիներով, Համշենով, գալիս են, գնում: Ամուսնության խնդրին գալով՝ ասեմ, որ կարող է համշենցին ամուսնանալ ստամբուլահայի հետ, սակայն ինչ պետք է լինի հետո, երբ երեխա ծնվի, այդ երեխան

եկեղեցում պետք է կնքվի, թե ոչ, այսինքն՝ սա կախված է կոնկրետ անձերից և կրոնի հանդեպ ունեցած նրանց անձնական վերաբերմունքից:

- Համշենցիներն ի՞նչ են մտածում Հայաստանի մասին, այն համարո՞ւմ են արդյոք նախկին հայրենիք կամ բնօրրան:

- Ոչ, նման բան չկա, սակայն շատ են ցանկանում գալ, տեսնել, որովհետև հետաքրքրվում են լեզվով և միգուցե, եթե ինքնության մասին կասկածներ ունեն, նաև դա փարատելու համար: Սակայն եթե անկեղծ ես ուզում իմանալ, ապա Հայաստանը որպես նախկին հայրենիք չեն ընդունում, այդպիսի բան չկա, իրենց հայրենիքը նրանք համարում են սևծովյան ափերը, որովհետև իրենց հայրերը, պապերը այդտեղ են ծնվել, այդտեղ ապրել:

- Սակայն մինչև սևծովյան ափերը գալը որտե՞ղ են ապրել, խոսքս դրա մասին է:

- Բայց քո նշած դեպքից ինչքա՛ն է անցել, շուրջ 1200 տարի, համշենցիներն իրենք իրենց արդեն այս սևծովյան մշակույթի կրողներ են համարում և ոչ՝ հայաստանյան:

- Իսկ ի՞նչ են մտածում համշենցիները Հրանտ Դինքի սպանության մասին:

- Հրանտը խիզախ խոսող մարդ էր և այնպիսի բաներ էր ասում, որ շատերը կվախենային դա ասել: Նա ասում էր, որ մինչ 1915-ը այստեղ ապրող 1.500.000 հայերը չկան, ի՞նչ եղան, ո՞ւր են: Հայտնի է, որ թուրքական պետությունը ժողովրդից շատ բաներ, ներառյալ և այս հարցը, փակ է պահում և հրամցնում միայն պաշտոնական տեսակետները, և ահա Դինքը նպաստեց, որ այս հարցն ավելի մասսայական քննարկվի, ու շատ բաներ սկսեցին ի հայտ գալ, շատերի համար մինչ այդ անհայտ բաներ պարզվեցին: Եթե դեպքերն այս հունով զարգանան, չի բացառվում, որ մի օր մեծ թվով մարդիկ իրենց մեջ ուժ կգտնեն ասելու, որ 1915-ին տեղի ունեցածների համար պետք է ներողություն խնդրել: Դինքի սպանությամբ փորձ արվեց նաև հարված հասցնել այս միտումին, բայց տեսա՞ք, թե ինչ եղավ նրա մահից հետո, երբ 100.000 մարդ դուրս եկավ փողոց: Սպանության գիշերը առաջինը հազարավոր ձախակողմյաններ դուրս եկան փողոց, և նրանք հայեր չէին: Ես քեզ ասեմ, որ Թուրքիայի հայերի մեծ մասը զգուշավոր է. նրանք միշտ ասում են՝ չխոսենք, չասենք, որ հայ ենք, մարդ չլսի, չիմանա, այսինքն՝ փոքրամասնության հոգեբանությունը միշտ ուղեկցում է նրանց:

- Այո, նման վարքագծի ես անձամբ եմ ականատես եղել Ստամբուլում, երբ ինձ ուղեկցող ստամբուլահայը հասարակական վայրերում առաջարկում էր չխոսել հայերեն, որ կողքից հանկարծ չլսեն, չիմանան, որ հայ ենք:

- Դա սխալ պահվածք է: Օրինակ՝ մի դեպք պատմեմ ինձ հետ կապված: Մի երկու տարի առաջ իմ թուրք գործընկերը, ում հետ այդ ժամանակ աշխատում էի, շատ գոհ լինելով ինձնից՝ հարցրեց, թե որտեղի՞ց եմ: Ես էլ ասացի՝ համշենցի եմ, հարցրեց՝ համշենցիները ովքե՞ր են, լա՞զ են, պատասխանեցի, որ նախկին հայեր են, նա էլ զարմացած ասաց. «Անհնար է, դու չես կարող հայ լինել, որովհետև դու շատ լավ մարդ ես»: Ես էլ նրան զայրացած հարցրի. «Դու այդ քանի՞ հայ ես ճանաչում, որ նման կարծիքի ես»: Նա էլ պատասխանեց. «Ոչ մի, ես գրքերում եմ դա կարդացել»: Մեր այս զրույցից հետո նրա մոտ ինչ-որ բան փոխվեց, երևի զգաց, որ սխալ էր մտածում: Այսինքն՝ չխոսելը սխալ է: Ահա Դինքը այս պատկերացումները և մտածելակերպը կոտրեց: Նրա սպանության երեկոյան ձախերը սկսեցին հավաքվել և այն էլ բավական մեծ թվով, այնուհետև հայերն էլ սկսեցին միանալ: Թուրքիայի տարբեր վայրերում բողոքի ակցիաներ եղան՝ Անկարայում, Իզմիրում, այլուր:

- Իսկ Համշենում Դինքի սպանության հետ կապված ինչ-որ միջոցառում եղա՞վ:

- Համշենում բողոքի ակցիա չեղավ, բայց շատ համշենցիների եմ ես տեսել թաղման արարողության և Ստամբուլի բողոքի ցույցի ժամանակ, որին անձամբ մասնակցում էի: Մարդիկ կային, որոնք եկել էին Համշենից հատուկ դրան մասնակցելու համար: Ավելին ասեմ. սպանության գիշերը և հաջորդ օրերին բողոքի ակցիայի հիմնական կազմակերպիչներից

երեքը համշենցիներ էին: Նշեմ նաև, որ համշենցիներն ընդհանրապես քաղաքականացված մարդիկ են, դեմ՝ ամեն տեսակի անարդարության, և նրանց մեծ մասն ընդդիմադիր է:

- Հայտնի է նաև, որ որոշ համշենցիներ զբաղեցրել են բարձր պաշտոններ Թուրքիայի Հանրապետությունում, օրինակ՝ նախկին վարչապետ Մեսութ Յըլմազը, Մուրադ Քարայալչը-նը և այլն:

- Այո, կան պաշտոնյաներ, բայց, օրինակ, բարձրաստիճան զինվորականների մեջ համշենցիներ չկան:

- Ինչի՞ հետ է սա կապված:

- Հայտնի է, որ զինվորական համակարգ մտնել ցանկացողի կենսագրությունը մանրակրիտ ուսումնասիրվում է:

- Այսինքն՝ ուզում ես ասել, որ այդ մանրակրկիտ ուսումնասիրությունները պարզում են, որ համշենցիներն ունեն հայկական ծագում և այդ պատճառով չեն ընդունվում զինվորական համակարգ:

- Այո:

- Եվ վերջում. ի՞նչ ես մտածում հայաստանցի հայերի և համշենահայերի հարաբերությունների մասին:

- Ես կարծում եմ, որ պետք է սերտացնել մշակութային կապերը, միգուցե ընդհանուր ծրագրեր կազմակերպել: Օրինակ՝ հայկական մշակույթը, բանահյուսական նյութերը, լեզուն մեծ ազդեցություն են ունենում համշենցիների վրա՝ կապված նաև քո նշած ազգային ինքնագիտակցության հետ: Այդ ամենը՝ ժողովրդական երգերը, տոները, լեզուն և այլնը, պարզորոշ ցույց են տալիս հայերի և համշենցիների նմանությունը, ընդհանրությունը...

Ռուբեն Մելքոնյան

ԺԵՐԱՐ-ՖՐԱՆՍՈՒԱ ԴՅՈՒՄՈՆԻ ԱՅՑԸ «ՆՈՐԱՎԱՆՔ»

Հունիսի 25-ին «Նորավանք»-ում տեղի ունեցավ հանդիպում Սորբոն-4 համալսարանի պրոֆեսոր *Ժերար-Ֆրանսուա Դյումոնի* հետ:

Պրոֆ. Դյումոնը հեղինակ է ինքնության հարցերին վերաբերող մի շարք աշխատությունների (*L'identité de l'Europe*, Nice, Editions du Crdp, 1998; *Les racines de l'identité européenne*, Paris, Editions Economica, 1999; *Die Identität Europas*, Schaffhausen, Novalis Verlag, 2001) և բավական հայտնի գիտնական, նաև հասարակական գործիչ է Ֆրանսիայում: Հարկ է նշել, որ նա ֆրանսիական Պատվո լեգեոնի շքանշանակիր է:

Քննարկվող հարցերի մասին

Էթնոմշակութային հարցեր

Ֆրանսիացի հյուրին հետաքրքրում էին հայոց ազգային ինքնության որոշ առանձնահատկություններ, մասնավորապես՝ դրանում տարբեր շերտերի առկայության հարցերը: Ասվեց, որ եթե վրաստանյան իրականությունում ինքնության տարբերությունները բավական հաճախ պայմանավորված են վրացի ներկայացվող ժողովրդի մեջ առկա էթնիկ տարբերություններով, ապա մեր պարագայում՝ տարածքային հենք ունեցող ենթաէթնիկ հանգամանքներով: Ասվածը պարզաբանվեց 1988-91թթ. Ադրբեջանից բռնագաղթած հայ փախստականների և նրանց բնակության նոր վայրերում (մասնավորապես՝ նախկին Վարդենիսի շրջանում) տեղացիների հետ շփումների օրինակով: Ինչպես ցույց են տալիս ազգագրական հետազոտությունների նյութերը, փախստականների և տեղացիների միջև առկա ինքության կոնֆլիկտի հիմքում ընկած է քաղաքակրթական/մշակութային գործոնը՝ պայմանավորված շփման մեջ գտնվողների արևելահայ և արևմտահայ, որոշ դեպքերում նաև՝ քաղաքաբնակ ու գյուղաբնակ կենցաղամշակութային առանձնահատկությունների կրողներ լինելու և դա որպես տարանջատիչ գործոն ընկալելու հանգամանքով: Այլ նյութերով ևս ցույց տրվեց, որ հայոց պարագայում ենթաէթնիկ տարբերությունների հիմքում պատմաազգագրական տարբեր մարզերում և շրջաններում բնակվելու և դրանից բխող առանձնահատկություններն են, որոնք գոյատևում են դարեր ի վեր և քայլ առ քայլ համահարթեցվում են պարբերական շփումների հետևանքով: Կարևորվեց այն դերը, որ կարող է խաղալ փոխադարձ ճանաչողության գործոնը մշակութային կոնֆլիկտների հաղթահարման գործում:

Տեղական ինքնակառավարման հարցեր

Պրոֆ. Դյումոնին հետաքրքրում էին նաև տեղական ինքնակառավարման հարցերը: Մասնավորապես նրան ներկայացվեց, որ 1990-ական թթ. իրականացված մարզային բաժանման հիմքում դրվել է Հայաստանի պատմաազգագրական շրջանավորումը, իսկ օրենսդրական հենքի համար նշանակալի դեր է խաղացել ֆրանսիական օրենսդրությունը:

ՀՀ հասարակական–քաղաքական իրավիճակին առնչվող հարցեր

Ֆրանսիացի հյուրը բավական մեծ ուշադրություն դարձրեց Հայաստանի հասարակական զարգացումներին և հարաբերություններին, այն է՝ հանրապետության և մարզերի կառավարման գործում տարածքային սոցիալ-մշակութային ցանցային կապերի նշանակությանը: Հաճախ պրոֆեսոր Դյումոնը ցանկանում էր խոսակցությունը տեղափոխել «կլանային» տնտեսություն և համակարգ տերմինաբանական դաշտ: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Դյումոնը և նրան ուղեկցող օգնականը բավական լավատեղյակ էին ընդհանրապես ՀՀ և մասնավորապես Հայաստանի տարբեր մարզերում տեղ գտած զարգացումներին:

Ֆրանսիացի հետազոտողին հետաքրքրում էր նաև հայ-վրացական հարաբերությունների իրական պատկերի վերհանումը։ Նա նոր էր վերադարձել Վրաստանից և այն տպավորությունն ուներ, թե հարևան պետությունների միջև քաղաքական հարաբերությունները նախագահների կողմից արվող ընդհանուր քաղաքական, բարեկամական հայտարարություններից զատ այլ զարգացումներ չունեն, իսկ առևտրատնտեսական հարաբերությունները բավական ցածր մակարդակի են։

Մյուս կարևոր հարցը, որը քննարկվեց հանդիպման ընթացքում, վերաբերում էր հայ-թուրքական սահմանի բացմանը։ Պրոֆ. Դյումոնին հետաքրքրում էր, թե տարբերվում է արդյոք սահմանի բացման նկատմամբ վերաբերմունքն ըստ մարզերի և մարզային էլիտաների։ Հարց բարձրացվեց այն մասին, թե արդյոք Հայաստանում կան քաղաքական և տնտեսական գործիչներ և տարածքային խմբավորումներ, որոնք պատրաստ են Հայոց ցեղասպանության և Արցախի հիմնախնդիրը դիտարկել որպես երկրորդական, իսկ իբրև առաջնային նշանակության խնդիր ընդունեն հայ-թուրքական առևտրատնտեսական համագործակցության հաստատումը և հայ-թուրքական սահմանի բացումը։

Նշենք, որ ողջ խոսակցությունը, ամենայն հավանականությամբ, ձայնագրվում էր ֆրանսիացի հյուրի կոստյումում տեղադրված ձայնագրիչի միջոցով, որը երևում էր վատ քողարկված լինելու պատճառով։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Սփյուռքագիտությունը որպես հետազոտական ուղղություն հիմնված է թե ընդհանրությունների և թե տարբերությունների ուսումնասիրման վրա: Հաճախ սփյուռքյան իրականությանը (լինի դա հայկական, թե այլ) բնորոշ հարցադրումները նման են իրար և՛ ձևի, և՛ բովանդակության առումներով, քանի որ դրանք արտածվում են նույնատիպ խնդիրներից՝ ինքնության պահպանման, մշակութային ինքնատիպության զարգացման, աճող սերնդի համար ազգային կրթության ապահովման և այլն: Այսպես, ՌԴ-ի և Վրաստանի հայկական համայնքներում արդեն իսկ նկատելի են որոշ ընդհանրություններ, որոնք պայմանավորված են նրանց հետխորհրդային արեալի մաս կազմելու հանգամանքով: Միևնույն ժամանակ, նշված համայնքներն էլ, անշուշտ, իրենց հերթին տարբերվում են բազմաթիվ այլ չափորոշիչներով: Դրանք պայմանավորված են սկսած տվյալ համայնքում ազգային ներուժի և կարողականության աստիճանով ընդհուպ մինչև բնակություն հաստատած երկրի աշխարհաքաղաքական կողմնորոշումներով: Այս ամենը կարևոր նախապայմաններ են, քանի որ ազդում են համայնքի ներսում ընթացող գործընթացների վրա:

Այսպես, հետխորհրդային տարածաշրջանի հայկական համայնքներն ունեն մի շարք ուշագրավ ընդհանրություններ: Կարելի է նկատել, որ զարգացման որոշ միտումներ ընդհանուր են, բայց և մտահոգիչ:

Դրանք են.

- Ապրելով նախկին ԽՍՀՄ մաս կազմող տարածաշրջաններում՝ ներքին սփյուռքի[1] ներկայացուցիչներն ընդհանուր առմամբ մինչև մեր օրերը պահպանել են հայրենիքի՝ Հայաստանի հետ մեկ պետականության շրջանակներում գտնվելու հոգեբանական ընկալումը: Այս ընկալումը չկա, օրինակ, այն համայնքներում, որոնք ձևավորվել են արևմտյան կամ մերձավորարևելյան երկրներում, և ստիպված են եղել ապավինել սեփական ուժերին և ինքնուրույն մշակել ներէթնիկ ինքնակազմակերպման միջոցառումներ: Այսպիսով, արտաքին սփյուռքում արդեն ձևավորվել են որոշակի մեխանիզմներ՝ քաղաքական կամ այլ կառույցների ձևաչափով, մինչդեռ ներքին սփյուռքում առավել մեծ էր պետության դերը, իսկ «ներքևից» կազմակերպված որևէ միջոցառում տարիներ շարունակ չէր խրախուսվում:
- Հետխորհրդային տարածքի հայկական համայնքներում հայերը շարունակում են որպես հիմնական մրցակից մնալ տեղացիների ընկալումներում: Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերի հայկական համայնքների մասին առկա նյութերում պարզ երևում է, որ տեղացիների պատկերացմամբ՝ իրենց հիմնական մրցակիցը հայերն են, հատկապես ռեսուրսների բաշխման և ներքին աշխատաշուկայում դիրքերի ձեռքբերման առումներով: Նույնը կարելի է ասել նաև Վրաստանի դեպքում, որտեղ ևս ակնհայտորեն, վրացիների պատկերացմամբ, իրենց հիմնական մրցակիցը հայերն են: Այսպիսով, տնտեսական առումով հայությունը բավական մրցունակ տարր է, բայց թե ինչպես է այդ իրողությունն անդրադառնում ընդհանուր առմամբ համայնքի ամրապնդման վրա՝ առանձին

[1] Դեռևս խորհրդային տարիներին կիրառվում էին արտաքին և ներքին սփյուռք եզրերը: Ներքին սփյուռքը ներառում էր ԽՍՀՄ տարածքի համայնքները, իսկ նրա սահմաններից դուրս գտնվող համայնքներն անվանում էին արտաքին սփյուռք: Թեպետ այսօր այդ եզրերն այլևս չեն կիրառվում, քանի որ ԽՍՀՄ գոյություն չունի, իսկ ՀՀ-ի համար բոլոր երկրներն էլ արտերկիր են, այնուամենայնիվ, մենք այն կիրառում ենք՝ դրանով իսկ ցույց տալով, որ անցյալի իրողությունները շարունակում են մեծապես ազդել ներկայիս զարգացումների վրա:

հարց է և լուրջ հետազոտության կարոտ։ Իսկ հայության շուրջ ձևավորվող անհանդուրժողականության մթնոլորտը, անշուշտ, մեր առջև ծառացած ներկայիս հրատապ խնդիրներից է։ Այն պետք է նաև որպես ձևակերպված խնդիր ընկալվի՝ դառնալով անհետաձգելի մտահոգության առարկա։ **Այսօր արդեն կարելի է նկատել, որ ներքին սփյուռքում մեր հայրենակիցները կարող են վերածվել վրացական ազգայնականության և ռուսական շովինիզմի անառողջ դրսևորման հիմնական թիրախի։**

- ՌԴ տարածքի հայկական համայնքների մեկ այլ առանձնահատկությունն այն է, որ համայնքները բազմաշերտ են, քանի որ դրանց ձևավորումն ընթացել է փուլերով։ Վերջին համալրումը եղել է 1990-ականների արտագաղթի արդյունքում. նոր գաղթածները հանդիպել են համայնքի «հին ալիքի» անդամներին, և նրանց միջև որոշակի հարաբերություններ են ձևավորվել։ Մինչխորհրդային և խորհրդային շրջանում այստեղ բնակվող և արտագաղթի վերջին՝ հզոր ալիքի հետևանքով այստեղ հայտնված հայության երկու հատվածների միջև առկա են տարանջատող գործոններ՝ ինքնանույնացման տարբեր բաղադրիչներ, որոնք ենթաէթնիկ են և չեն ընդհանրանում ազգայինի շրջանակներում։ Մյուս կողմից՝ նոր ալիքը նույնպես միատարր չէ. գործում է ինքնանույնացման ենթաբաժանում ըստ նախկին բնակության վայրի՝ ղարաբաղցիների, կիրովաբաղցիների, գետաշենցիների, բաքվեցիների, երևանցիների և այլն։ Այսինքն՝ հայկական համայնքներում կղզիացումն ու ներքին տրոհումներն ընթանում են ոչ միայն ժամանակային սկզբունքով (այսինքն՝ ըստ բնակության նոր վայրում հայտնվելու պատմական ժամանակաշրջանի), այլև տարածական-աշխարհագրական (այսինքն՝ թե պատմական Հայաստանի կոնկրետ որ հատվածն է ներկայացնում անհատը)։ Սրանք նոր տարանջատող գործոններ են հայկական համայնքների համար։ Սակայն այս առանձնահատկությունը բնորոշ է առավելապես ՌԴ համայնքներին և նվազ չափով՝ վիրահայությանը, քանի որ ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ-ից կամ ԼՂՀ-ից Վրաստան արտագաղթի ալիք գրեթե չի նկատվել (գոնե այն քանակով, որը կարող էր որակական նոր երևույթներ առաջացնել)։ **Այսպիսով, արտագաղթի վերջին ալիքի հետևանքով ՌԴ հայկական համայնքները կորցրել են միատարրությունը, ձևավորելով նոր՝ ներհամայնական համախմբման և ներքին տարաձայնությունների հաղթահարման խնդիրը։**
- Այսօր լուրջ վտանգ է սպառնում հայեցի կրթությանը։ Նախկինում որոշակի դերակատարություն ունեցող կիրակնօրյա դպրոցներն այսօր կորցրել են իրենց գրավչությունը։ Հետխորհրդային տարածքի պետություններում հատկապես երիտասարդները նախընտրում են հայերենի փոխարեն հաճախել օտար լեզուների և համակարգչային ուսուցման դասընթացներ։ Այն դեպքում, երբ ուծացման գործընթացներն ընթանում են արագ տեմպերով, մայրենի լեզուն օր օրի կորցնում է իր նախկին՝ պատմական հայապահպան գործառույթը։ **Այսպիսով, հայոց լեզուն սրընթաց կորցնում է դիրքերը գրեթե բոլոր համայնքներում։**
- Հայ Առաքելական եկեղեցին դեռևս չի կորցրել իր պատմական ազգապահպան առաքելությունը և համայնքներում շարունակում է մնալ ազգային ինքնության հիմնական անկյունաքարը։
- Ազգային թերթերն ու ամսագրերն ունեն մեկ հիմնական խնդիր՝ կայուն ֆինանսավորման։ Դրանք լույս են տեսնում տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական այլ աղբյուրների ֆինանսավորման իսպառ բացակայության պայմաններում։ Այդ պարբերականները որպես կանոն հազվադեպ են վաճառքի կամ բաժանորդագրության միջոցով ապահովում հրատարակչական ծախսերը (իր ֆինանսական ծախսերը ծածկող սակավաթիվ պարբերականներից է Կրասնոդարի «Երկրամաս» թերթը, որն ունի նաև ինտերնետային կայք)։ Այսպիսով, ֆինանսավորման հիմնական աղբյուրը շարունակում են մնալ առանձին հայրենասեր անհատների ֆինանսական ներդրումները

կամ հաճախ ուղղակի հրատարակչական անձնակազմի անհատույց ջանքերն ու ազգային գործին անհատույց տրամադրած աշխատաժամանակը։

- Գրեթե բոլոր համայնքներում, թերևս, ամենակարևոր ազգային միջոցառումը Ցեղասպանության հիշատակի օրն է։
- Վերջին շրջանում նկատվում է Արցախի խնդրի նկատմամբ ՌԴ-ում ապրող հայության ուշադրության նվազում։
- Որպես ուծացման գործընթացի արագ տեմպերը կասեցնելու առաջին քայլ՝ կարևորվում է այն գործընթացների խթանումը, որոնց արդյունքում կձևավորվեն հայերով խիտ բնակեցված տարածքներ։ Ցաք ու ցրիվ բնակություն հաստատած հայերը ոչ միայն ազգային ինքնության պահպանման առավել լուրջ խնդիր ունեն, այլև ուղղակի անձի անվտանգության։ Իսկ կոմպակտ բնակված հայության առկայությունը, անշուշտ, կնվազեցնի ռիսկերը՝ կձևավորի հայկականության պահպանման և ընդհանուր անվտանգության համեմատաբար բարենպաստ միջավայր։

Թամարա Վարդանյան
«Նորավանք» հիմնադրամ

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՀՈԼՈՔՈՍՏԻ ՄԵՄՈՐԻԱԼ ԹԱՆԳԱՐԱՆԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Այն փաստը, որ Հոլոքոստի թանգարան գոյություն ունի Իսրայելում, միանգամայն տրամաբանական է, սակայն որ այդպիսի թանգարան է գործում նաև ԱՄՆ մայրաքաղաքում, ցուցիչն է այն բանի, թե ինչպես կարելի է խորապես ազգային ողբերգությունը միանգամայն ընդունելի ձևով մատուցել համաշխարհային հանրությանը:

Թանգարանի ստեղծման մասին առաջին մտահղացումները մեջտեղ եկան դեռևս ԱՄՆ նախագահ Քարթերի իշխանության տարիներին: Սաուդյան Արաբիային *F16* կործանիչներ վաճառելուց և Պաղեստինի ազատագրության կազմակերպության հետ խորհրդակցություններ սկսելուց հետո ԱՄՆ հարաբերությունները Իսրայելի և ամերիկյան հրեական կազմակերպությունների հետ բավական վատթարացան: Նախագահի վարչակազմը՝ հարաբերությունները բարելավելու միտումով, Հոլոքոստի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր կառուցելու պլաններ մշակեց: Նման քայլի դիմելուն նպաստել էր նաև այն հանգամանքը, որ դրանից քիչ առաջ ԱՄՆ հեռուստատեսությամբ ցուցադրվել և մեծ ընդունելության էր արժանացել «Հոլոքոստ» հեռուստատեսային բազմամասանոց կինոնկարը:

1978թ. մայիսի 1-ին, Իսրայելի վարչապետ Բեգինի ԱՄՆ կատարած պաշտոնական այցի ընթացքում, նախագահ Քարթերը հայտարարեց Հոլոքոստի հուշահամալիրի պլանի մշակման հանձնաժողովի ստեղծման մասին: Հանձնաժողովի ձևավորման համար պահանջվեց վեց ամիս: Վերջինիս նախագահ ընտրվեց *Elie Wiesel-ը,* որը Հոլոքոստի վերապրող էր և այդ թեմայի շուրջ բազմաթիվ գրքերի հեղինակ: Մտավախություն կար միայն, թե արդյոք նա կհաջողի հարցի քաղաքական արծարծումներում և դրամահավաքի գործում: Հանձնաժողովը ձևավորվեց 25 մարդուց, այդ թվում՝ վերապրողներ, պատմաբաններ, հրեական համայնքների ներկայացուցիչներ, ռաբբիներ: Կային նաև հինգ հոգի ԱՄՆ Ներկայացուցիչների պալատից և Սենատից: Լոբբիստական կազմակերպությունները ևս ներգրավված էին այս գործում:

Հանձնաժողովի առաջին կարևոր նպատակն էր ցույց տալ ամերիկացիներին նման թանգարանի անհրաժեշտությունը: Այդ հարցում հատկապես հետաքրքրված էին երկրի հրեական համայնքները, որոնց համար Հոլոքոստն ուներ ձևավորիչ նշանակություն: Նրանք շահագրգռված էին այն բանում, որ Հոլոքոստը Միացյալ Նահանգների արժեքային համակարգի մասը կազմի՝ որպես նման բնույթի արժեքների մերժման օրինակ: Տարբեր մոտեցումներ էին դիտարկվում հուշային կառույցի գաղափարը ԱՄՆ պատմության հետ կապելու համար: Այսպես, սկզբում ենթադրվում էր ինտեգրել այն ԱՄՆ պատերազմի վետերանների պատմությունների հետ: Երկրորդ ճանապարհ էր դիտվում Հոլոքոստի իրողությունները պատերազմից հետո ԱՄՆ տեղափոխված վերապրողների պատմությունների միջոցով ներկայացնելը: Երրորդ ուղին էր ԱՄՆ արժեքներին ուղղակիորեն հղումը: Ենթադրվում էր այդ կերպ փաստարկել, թե ինչ է պատահում, երբ բացակայում, ոտնահարվում են հիմնարար ամերիկյան արժեքները: Այդ ուղղակի կապն արտահայտված է թանգարանի մուտքին արված երկու արձանագիր մեջբերումների միջոցով, որոնցից մեկը վերցված է Ջորջ Վաշինգտոնից. «ԱՄՆ կառավարությունը... չի ողջունում անհանդուրժողականությունը, չի աջակցում հալածանքներին», իսկ մյուսը՝ Անկախության հռչակագրից. «Բոլոր մարդիկ հավասար են ստեղծված... նրանք իրենց Արարչից օժտված են որոշակի անկապտելի իրավունքներով, այդ թվում կյանքի, ազատության և երջանկության ձգտման»: Այսպիսով, հիմնական շեշտադրումը եվրոպական պատմության իրադարձությունը ամերիկյան հասարակությանը փոխանցելն էր:

Հոլոքոստի պատմությունն ամերիկյան իրականություն ներմուծելը բավական արդյունավետ էր նաև այն պատճառով, որ ներգաղթյալների տարբեր էթնիկ համայնքներ ակտիվորեն ներգրավված էին գործի պլանավորման մեջ: Դրանք գերազանցապես հրեական համայնքներն էին, սակայն լեհական, ուկրաինական և հայկական, ինչպես նաև այլ համայնքներ

նույնպես մասնակցում էին ծրագրի իրականացմանը: Որոշ դեպքերում դա հանգեցնում էր քաղաքական բնույթ ունեցող վիճաբանությունների, կոնֆլիկտների: Նման կոնֆլիկտներից մեկը հայերի և հայկական աղետը թանգարանում ներկայացնելու ձևի հարցն էր: Հարցը դրվում էր հետևյալ կերպ. արդյո՞ք հայերը պետք է ունենային իրենց հատկացված բաժինը, թե՞ պարզապես պետք է հիշվեին: Վերջապես կողմերը գտան փոխզիջումային լուծում. հայերը նշվեցին Հիտլերից բերված հայտնի մեջբերման մեջ. «Ո՞վ է այսօր հիշում հայերի ոչնչացման մասին»:

Նման բանավեճերից զատ, հարց էր բարձրացվում, թե որը պետք է լինի Հոլոքոստի համարժեք սահմանումը: Իսրայելում այս հարցն ուներ հստակ պատասխան՝ Հոլոքոստը վեց միլիոն հրեաների ոչնչացումն է: Գերմանիայում ընթացող քննարկումներում հարցն ավելի լայն համատեքստում էր դիտարկվում, քանի որ Գերմանիան պարտադրված էր հիշել նացիստական դաժանությունների բոլոր զոհերին: Միացյալ Նահանգներում իրավիճակն ավելի բարդ էր: Հոլոքոստի բնութագրումից, ներկայացումից էր կախված, թե որ խմբերը ձեռք կբերեին զոհի կարգավիճակ ու, այդպիսով, կներկայացվեին թանգարանում: Բավական էական տարբերություն կար, թե Հոլոքոստը կբնորոշվեր իբրև վեց միլիոն հրեաների՞, թե՞ տասնմեկ միլիոն զոհերի սպանություն, այն է՝ վեց միլիոն հրեաներ, գումարած հինգ միլիոն այլ զոհեր, այդ թվում՝ երեք միլիոն լեհեր, հարյուր հազարավոր հունգարացիներ և այլն: Կար նաև այլ տարբերակ, այն է՝ եղել են միլիոնավոր զոհեր, միաժամանակ նշելով, որ հրեաների դեպքը հատուկ է, քանի որ կար նրանց իսպառ բնաջնջման նացիոնալ-սոցիալիստների պլանը:

Այս հարցերը քննարկման առարկա էին բավական երկար ժամանակ: Ի վերջո որոշվեց, որ շեշտադրումը պետք է արվի եվրոպական հրեաների հալածանքների և բնաջնջման խնդիրների վրա: Սակայն մշտական ցուցադրության մեջ պետք է լինեն մի քանի բաժիններ, որտեղ պետք է առնվազն հիշատակվեն նաև զոհերի այլ խմբեր՝ նացիստների քաղաքական հակառակորդները, համասեռամոլները, Եհովայի վկաները, մտավոր և ֆիզիկական թերություններ ունեցող հաշմանդամները, այլ էթնիկ խմբեր, պատերազմի խորհրդային գերիները և նույնիսկ հայերը:

Ինչպես նկատել է թանգարանի պատասխանատու աշխատակիցներից մեկը, թանգարանի գործառույթներում հաջողվել է միավորել Հոլոքոստի պատմությունը, պատերազմի մասնակից ամերիկյան զինվորների անձնական փորձառությունը և ներկա քաղաքական քննարկումները: Բացումից ի վեր (1993թ.) Միացյալ Նահանգների Հոլոքոստի մեմորիալ թանգարանը մեծ դեր է խաղում քաղաքական հարթությունում: Այն տարաբնույթ բռնությունների դեմ պայքարի առաջամարտիկների թվում է, և դա միանգամայն տեղավորվում է թանգարանի առաքելությունների շրջանակում: Միացյալ Նահանգների պարագայում սա նշանակում է Հոլոքոստի համընդհանուր դասերի ուսուցում և այն հարցի պարբերաբար բարձրացում, թե ինչ կլինի, եթե բացակայեն ամերիկյան հիմնարար արժեքները:[1]

Միացյալ Նահանգների Հոլոքոստի մեմորիալ թանգարանն *(The United States Holocaust Memorial Museum)* ԱՄՆ ազգային հաստատություն է *(national institution)* ՝ուղղված Հոլոքոստի պատմության վերաբերյալ փաստաթղթերի հավաքմանը, ուսումնասիրությանն ու մեկնաբանմանը և այս երկրի կողմից ստեղծված հուշային կառույց է:

Թանգարանի առաջնային առաքելությունն է նպաստել Հոլոքոստի ողբերգության մասին գիտելիքների տարածմանը, պահպանել դաժանագույն տանջանքները վերապրողների հիշողությունները և աջակցել այցելուներին խորհելու բարոյական և հոգևոր այն հարցերի շուրջ, որոնք վեր են հառնում Հոլոքոստի իրադարձություններին տեղեկանալուց, ինչպես նաև այդ համատեքստում մտածելու իրենց՝ որպես ժողովրդավարության քաղաքացիների, պարտականությունների շուրջ:

Հոլոքոստի թանգարանի քառահարկ շինության երեք հարկերի ցուցադրությունը իրերի, լուսանկարների, ֆիլմերի և ականատեսների վկայությունների միջոցով ներկայացնում է Հո-

[1] Վերոշարադրյալի հենքը կազմում է Գերմանական և եվրոպական ուսումնասիրությունների կանադական կենտրոնի (*The Canadian Centre for German and European Studies*) աշխատակից, անկախ հետազոտող Մատիաս Հասի ծավալուն աշխատանքի մի մասը: Տե՛ս *Matthias Haß.* The Politics of Memory in Germany, Israel and the United States of America. The Canadian Centre for German and European Studies, Working Paper Series Number 9, pp. 12-15.

լոքոստի համապարփակ պատմությունը: «Հոլոքոստը» *(The Holocaust)* վերնագրված ցուցադրությունը, որտեղ, որպես կանոն, այցելուները մնում են մեկից երեք-չորս ժամ, սկսվում է վերին հարկից և բաժանված է երեք ժամանակագրական հատվածների: Ցուցադրության առաջին բաժինը՝ «Նացիզմի գրոհը. 1933-1939» *(The Nazi Assault – 1933 to 1939)* նվիրված է մինչհոլոքոստյան տարիների կյանքի նկարագրությանը և ընդգրկում է նացիստական կուսակցության իշխանության գալուց մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը ներառող հատվածը: Այստեղ ցույց է տրված, թե ինչպես են ամբողջատիրական պետության գործիքները՝ քարոզչությունը, տեռորը, բռնությունը և պետականորեն օժանդակվող ռասիզմը բերում հալածանքների սաստկացման: Ցուցադրության այս հատվածից սկսած ներկայացվում է, թե ինչպես են ամերիկացիներն արձագանքում նացիստական հալածանքների մասին նորություններին, փախստականական խնդիրներին և այն իրադարձություններին, որոնք բերեցին հրեաների ցեղասպանությանը: Այստեղ այցելուներին առաջարկվում են երկու ֆիլմեր՝ «Նացիստների իշխանության գալը» (13 րոպե) և «Հակասեմականություն» (14 րոպե):

Հաջորդ հարկը զբաղեցնող հատվածը վերնագրված է «Վերջնական լուծումը. 1940-1945» *(The «Final Solution» – 1940 to 1945):* Այստեղ ներկայացվում է նացիստական քաղաքականության՝ պատերազմի տարիներին տեղ գտած էվոլյուցիան՝ հալածանքներից մինչև զանգվածային սպանություններ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին նացիստներն ու նրանց հետ գործակցողները՝ Եվրոպայում արդեն ոչնչացրել էին շուրջ վեց միլիոն հրեաների, ինչը կազմում էր մինչպատերազմյան Եվրոպայի հրեա բնակչության երկու երրորդը:

Այս հարկում տեղակայված աուդիո-թատրոնը ներկայացնում է Հոլոքոստը վերապրողների վկայությունները՝ «Ձայներ Աուշվիցից» *(Voices from Auschwitz):* Ցուցադրության այս բաժնում գլխավոր ուշադրությունը բևեռված է համակենտրոնացման ճամբարներին, որոնք մեծ արագությամբ աճեցին 1940-ական թթ.: Այստեղ է գտնվում նաև մի եռահարկ, բրգաձև սրահ՝ «Դեմքերի աշտարակը» *(The Tower of Faces),* որի պատերին փակցված են լիտվական Էյսիսկես (Eisiskes) քաղաքի ոչնչացված հրեական համայնքի մինչպատերազմյան տարիների շուրջ 3500 բնակիչների մոտ 1000 լուսանկարների վերատպությունները:

Մշտական ցուցադրության վերջին մասը՝ թանգարանի երկրորդ հարկի ցուցադրությունը, վերնագրված է «Վերջին գլուխը» *(Last Chapter)* և վերաբերում է համակենտրոնացման ճամբարների ազատագրմանը հակահիտլերյան կոալիցիայի ուժերի կողմից, Գերմանիայի պարտությանը, հրեաների դիմադրության և նրանց փրկության փորձերին, Հոլոքոստի հետևանքներին: Այստեղ այցելուների ուշադրությանն է առաջարկվում ևս մեկ ֆիլմ՝ նվիրված պատերազմի տարիներին Հոլոքոստի առթիվ ամերիկյան արձագանքներին, ինչպես և «Վկայություն» *(Testimony)* վերնագրով ֆիլմ, որտեղ վերապրողները, հրեաներին փրկելու համար իրենց կյանքը վտանգողները, ինչպես նաև ազատարարները «կիսվում» են փորձառությամբ: Ցուցադրության այս մասում շոշափվում է վտանգի մեջ գտնվող ծանոթ կամ անծանոթ մարդկային էակների նկատմամբ անհատական պատասխանատվության խնդիրը:

Թանգարանի առաջին հարկում է գտնվում «Հիշեք երեխաներին. Դանիելի պատմությունը» *(Remember the Children: Daniel's Story)* ցուցահանդեսը, որը ներկայացնում է Հոլոքոստի պատմությունը նացիստական Գերմանիայում մեծացող պատանու տեսանկյունից և նյութի մատչելիության առումով ուղղված է առաջին հերթին ցածր և միջին տարիքի դպրոցականներին:

Թանգարանում գործում են նաև մի քանի հատուկ ցուցահանդեսներ: Ժամանակակից ցեղասպանություններին նվիրված ցուցահանդեսները տեղակայված են թանգարանի ստորին հատվածում գտնվող Մեյերհոֆ թատրոնում *(Meyerhoff Theater)* և երկրորդ հարկում գտնվող Վեքսների ուսուցման կենտրոնում *(Wexner Learning Center):*

Թանգարանում կան հուշային գործառույթ իրականացնող մի քանի հատուկ տարածքներ: Դրանցից առաջինը երկրորդ հարկում գտնվող Հիշողության սրահն է *(Hall of Remembrance)* հավերժական կրակով: Երկրորդը Գոնդա ուսուցողական կենտրոնում *(Gonda Education Center)* գտնվող Հիշողության պատն է (Երեխաների սալիկների պատը) (*Wall of Remembrance (Children's Tile Wall)*՝ կազմված սալիկներից, որոնք ամեն տարի նկարազարդում են շուրջ 3000 ամերիկացի դպրոցականներ:

Վեքսների ուսուցման կենտրոնում, ինտերակտիվ խցիկների միջոցով հաղորդակցվելով թանգարանի ռեսուրսներին, կարելի է հետազոտել անցյալի և ներկայի իրադարձությունների տարբեր տեսանկյունները: Վերապրողների Միդի գրանցման բաժինը *(Meed Survivors Registry)* նացիստական ռեժիմի պայմաններում ապրած մարդկանց և նրանց ընտանիքների անդամների համար հնարավորություն է ստեղծում գրանցել իրենց պատմությունները կամ էլ հետազոտել արդեն գրանցված իրողությունները: Այստեղ (ինչպես նաև վեբկայքում տեղակայված) լրացման թերթիկները 18 լեզուներով են: Բացումից ի վեր այս բաժնում գրանցվել են 195 հազար վերապրողներ ու նրանց ընտանիքներ ԱՄՆ բոլոր նահանգներից և աշխարհի վեց տասնյակ երկրներից:

Հոլոքոստի մեմորիալ թանգարանը նաև հետազոտական խոշոր կենտրոն է: Մասնավորապես, թանգարանի հինգերորդ հարկում է տեղակայված գրադարանը (65 հազար կտոր գրականություն շուրջ երեք տասնյակ լեզուներով), արխիվները (փաստաթղթերի շուրջ 38 միլիոն էջեր), լուսանկարների հավաքածուն (74 հազար պատմական լուսանկարներ, 15 հազարը հասարակությանը մատչելի են թանգարանի վեբկայքի միջոցով): Այստեղ է գտնվում նաև Հոլոքոստի արդիական ուսումնասիրությունների կենտրոնը *(The Center for Advanced Holocaust Studies):* Այն միտված է Հոլոքոստի հետազոտման գործում դրամաշնորհների տրամադրմանը և հրատարակությունների օժանդակմանը, նպաստում է ամերիկյան համալսարաններում տարվող Հոլոքոստի ուսումնասիրություններին, ուղղված է ամերիկյան և աշխարհի այլ գիտնականների միջև կապերի ամրապնդմանը, ծրագրեր ապահովելու համար Հոլոքոստի հարցերով զբաղվող գիտնականների երիտասարդ սերնդի մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը: Կենտրոնը սերտորեն համագործակցում է Հոլոքոստի մեմորիալ թանգարանի խորհրդի ակադեմիական կոմիտեի հետ, որի անդամներն ամերիկյան և եվրոպական համալսարանների շուրջ երկու տասնյակ հայտնի հետազոտողներ են: Կենտրոնն իր առաքելությունն իրականացնում է.

ա) աջակցելով հետազոտական ծրագրերին և հրատարակություններին, այդ թվում՝ համագործակցելով *Oxford University Press-ի* հետ՝ տպագրում է *Holocaust and Genocide Studies* պարբերականը (լույս է տեսնում տարին երեք անգամ, մինչ օրս հրատարակվել է 21 համար),

բ) Հոլոքոստին առնչվող արխիվային նյութերի հավաքագրմամբ և պահպանությամբ՝ հնարավորություն ստեղծելով, որպեսզի նախկինում դժվարամատչելի նյութերը ենթակա դառնան հետազոտության համար,

գ) հետազոտություններ իրականացնելու հնարավորություններ է ստեղծում սկսնակ և հասուն հետազոտողների համար, որպեսզի նրանք կարողանան աշխատել թանգարանի արխիվային և այլ հավաքածուների հետ, օժանդակում է Հոլոքոստին վերաբերող նրանց աշխատանքների հրատարակությանը,

դ) կազմակերպում է դասախոսություններ, սեմինարներ, գիտաժողովներ քոլեջների և համալսարանների դասախոսների մակարդակով:

Կենտրոնը գործում է 1998 թվականից և նպատակ ունի, հաշվի առնելով Հոլոքոստի ժամանակակիցների և ականատեսների անխուսափելի հեռացումը, ձևավորել նրանց գործն առաջիկա տասնամյակներին շարունակողների սերունդ:

Այս սերնդափոխության հետևանքով ամերիկյան քոլեջներում և համալսարաններում Հոլոքոստին առնչվող դասընթացների մեծ պահանջ է նկատվում: Ի լրումն՝ վերջին տարիներին Եվրոպայի, նախկին ԽՍՀՄ, ԱՄՆ արխիվներից ու մասնավոր հավաքածուներից նախկինում ոչ մատչելի արխիվային նյութեր են բացահայտվել: Այս փաստաթղթային հավաքածուները նախկինում նմանը չունեցող հնարավորություններ են բացել Հոլոքոստի ժամանակաշրջանի պատմության նորովի լուսաբանման, ինչպես նաև Հոլոքոստի գիտական և էթիկական նշանակության վերհանման համար:

Կենտրոնում գործում են մի շարք ծրագրեր. հրավիրյալ հետազոտողների *(visiting scholar programs),* արխիվային հավաքածուների *(archival collection program),* դասախոսական անձնակազմի համար նախատեսվող սեմինարների *(seminars for faculty),* հետազոտական աշխատանքային սեմինարների *(research workshops)* և այլն: Կենտրոնը դրամաշնորհներ է տրամադրում Հոլոքոստին նվիրված կարևոր հետազոտությունների անցկացմանը և շարադրմանն

օժանդակելու համար։ Դրանք տրվում են մրցութային հենքով։ Ծրագրերը կարող են վերաբերել Հոլոքոստին առնչվող բոլոր կարևոր թեմաներին, այդ թվում՝ պատմությանը, քաղաքագիտությանը, գրականությանը, հրեական հետազոտություններին, փիլիսոփայությանը, կրոնին, հոգեբանությանը, ցեղասպանությունների համեմատական ուսումնասիրությանը, իրավունքի հարցերին և այլն։ Հրավիրյալ հետազոտողների համար մատչելի են Հոլոքոստին առնչվող վերը հիշատակված փաստաթղթային մեծածավալ նյութերը, գրադարանը, բանավոր պատմություններին (այստեղ պահվում են շուրջ 9 հազար պատմությունների ձայնագրություններ), ֆիլմերին, լուսանկարներին ու հուշերին առնչվող հավաքածուները, Հոլոքոստը վերապրողների տվյալների շտեմարանը։ 1994թ. ի վեր կենտրոնը հյուրընկալել է 235 հետազոտողների, անց են կացվել շուրջ 370 սեմինարներ և գիտաժողովներ։

Թանգարանի վեբկայքում տեղադրված է Հոլոքոստի արդիական ուսումնասիրությունների կենտրոնի օժանդակությամբ 12 տարվա ընթացքում հրատարակված շուրջ հինգ տասնյակ գրքերի ցուցակը՝ յուրաքանչյուրի մասին համառոտ տեղեկություններով, ինչպես նաև ավելի քան չորս տասնյակ դասախոսությունների կամ գիտաժողովներում հնչած ելույթների *PDF* տարբերակները։ Կենտրոնն ունի նաև էլեկտրոնային լրատու *(electronic newsletter),* որին կարող է բաժանորդագրվել ցանկացած ոք ու պարբերաբար ստանալ թանգարանի գործունեությանն առնչվող թարմ լուրեր։ Կենտրոնի վեբկայքում է տեղակայված թանգարանում պահվող շուրջ ութ տասնյակ հավաքածուների գրեթե կեսի համառոտ նկարագրությունը, ինչպես նաև թանգարանի նյութերի թեմատիկ-առարկայական բավական ընդարձակ ցանկը։ Ամեն ամիս ինտերնետային այցելուները նայում են թանգարանի վեբկայքի 10 մլն 100 հազար էջեր, ամեն տարի ներկայացվում են արխիվներից օգտվելու 17 հազար, լուսանկարային ֆոնդերից օգտվելու շուրջ 1800 դիմումներ։

Միացյալ Նահանգների Հոլոքոստի մեմորիալ թանգարանի կառուցումը սկսվել է 1989թ. հուլիսին և ավարտվել 1993թ. ապրիլին։ Կառուցումն արժեցել է $90 մլն, ևս $78 մլն ծախսվել է ցուցադրության կազմակերպման համար։

Թանգարանի կառավարումն իրականացվում է խորհրդի կողմից, որի 65 անդամները (այդ թվում՝ 10 կոնգրեսական և սենատոր, ներկայացուցիչներ պետական, կրթության և ներքին գործերի դեպարտամենտներից) նշանակվում են ԱՄՆ նախագահի կողմից։ Թանգարանի խորհրդի ներկայիս նախագահ *Fred S. Zeidman-ը,* որն այդ պաշտոնում նշանակվել է 2002թ., Հյուսթոնից է (Տեխասի նահանգ)։ Նա բիզնեսի ոլորտից է և ներկայումս ղեկավարում է թանգարանի համար մշտական եկամուտ ապահովող ֆոնդի *(endowment fund)* ձևավորման գործը։ Խորհրդի փոխնախագահ *Joel M. Geiderman-ը* Լոս Անջելեսից է, Հոլոքոստը վերապրողի որդի է, բժշկական էթիկայի մասնագետ, ինչպես նաև շտապ բուժօգնության համերկրային ճանաչում ունեցող անձնավորություն։ Թանգարանի հինգերորդ, 1989թ. ի վեր գործադիր տնօրենն է *Sara Bloomfield-ը։* Ամենամյա շուրջ $70 մլն բյուջեի կեսը թանգարանը, որպես կանոն, ստանում է դաշնային կառավարությունից, իսկ մասնավոր սեկտորն օժանդակում է կրթական և գիտական հետազոտությունների գործը։ Ներկայումս թանգարանի բյուջեի $43,8 մլն-ը ստացված է դաշնային բյուջեից, $25,9 մլն-ը՝ մասնավոր սեկտորից։ Ցանկացողների համար ստեղծվել է հնարավորություն՝ իրականացնելու դրամական նվիրատվություններ։

1993թ. ապրիլին բացվելուց հետո թանգարան է այցելել 24,4 մլն մարդ, այդ թվում՝ 17 մլն ոչ հրեաներ։ Թանգարան են այցելել պետությունների 85 ղեկավարներ և պատվիրակություններ 131 երկրներից։ Կարևոր հանգամանք է դիտվում 8 մլն դպրոցականների այցելության փաստը։

Թանգարանի օժանդակողների (բարեկամների) պաշտոնական թիվը 145 հազար մարդ է, հաստատության գործունեությանն աջակցում են ավելի քան 320 կամավորներ, այդ թվում՝ 86 վերապրողներ։ Կամավորներն իրենց գործունեությամբ թանգարանին՝ տարեկան կտրվածքով, նվիրում են 60 հազար ժամ։ Թանգարանի աշխատակիցների կողմից տարվող ամենամյա մասնագիտական դասընթացներին (թրեյնինգ) մասնակցում են ավելի քան 3000 ուսուցիչներ ԱՄՆ բոլոր նահանգներից։ 1991-ից սկսած՝ թանգարանի կազմակերպած ութ տարբեր ցուցադրություններ շրջել են ԱՄՆ 36 նահանգների գրեթե հարյուր քաղաքներով։

ԱՄՆ Կոնգրեսը, որպես ամերիկյան ազգի կողմից Հոլոքոստի զոհերի ամենամյա նշման օրեր, սահմանել է Հիշատակի օրեր *(Days of Remembrance),* որոնք նշվում են 2001թ. ի վեր: Այդ նույն տարվանից Հոլոքոստի հիշատակի օրը նշվում է նաև Մեծ Բրիտանիայում: 2007թ. Հոլոքոստի հիշատակի օրը ապրիլի 15-ն էր, կիրակի, սակայն տարաբնույթ հանդիսություններն իրականացվում էին մեկ շաբաթ տևողությամբ: Որպես 2007թ. հանդիսությունների հիմնական թեմատիկ շեշտադրում՝ թանգարանն ընտրել էր «Երեխաները ճգնաժամի պայմաններում. ձայներ Հոլոքոստից» *(Children in Crisis: Voices from the Holocaust)* վերնագիրը:

2007թ. ապրիլի 18-ին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը ելույթ է ունեցել թանգարանում: ԱՄՆ նախագահին ներկայացնելիս թանգարանի խորհրդի նախագահը նկատել է, որ Ջ.Բուշի անները՝ որպես երիտասարդ զինվոր, Երկրորդ համաշխարհայինի տարիներին մասնակցել է համակենտրոնացման ճամբարի ազատագրմանը: Նախագահի շուրջ տասը էջանոց ելույթի խոսքում Հոլոքոստի իրողությունը դիտարկվել է լայն համատեքստում, շեշտվել է Հոլոքոստի թանգարանի գործունեության այժմեականությունը, մեծ ուշադրություն է հատկացվել Դարֆուրում (Սուդան) մեր օրերում ընթացող ցեղասպանությանը:

Նկատենք, որ թանգարանի վեբկայքում կա հատուկ էջ, որտեղ համապատասխան նյութերի մատուցմամբ բավական մանրամասն խորհուրդներ են տրվում, թե ինչպես է պետք կազմակերպել Հոլոքոստի հիշատակի օրվա նշումը:

2006թ. հոկտեմբերին ՄԱԿ Գլխավոր ասամբլեան ընդունեց հունվարի 27-ը որպես Հոլոքոստի զոհերի հիշատակի նշման ամենամյա միջազգային օր *(Annual International Day of Commemoration in Memory of the Victims of the Holocaust)* սահմանելու որոշում: Այդ օրը 1945թ. ազատագրվեց Աուշվից-Բիրկենաուն՝ նացիստների ստեղծած ամենամեծ համակենտրոնացման ճամբարը:

Հարություն Մարության
«Նորավանք» հիմնադրամ

TRANSPARENCY INTERNATIONAL[1]. «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԻՆԴԵՔՍԸ 2000-2006ԹԹ.»

«Transparency International»-ը *(TI)* շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է: *TI*-ը հիմնադրվել է 1993թ., որի գրասենյակները տեղակայված են 87 երկրներում: Կազմակերպության քարտուղարությունը տեղակայվում է Գերմանիայում (Բեռլին): Կազմակերպության առաքելությունն ուղղված է միասնական կամ համաշխարհային հակակոռուպցիոն համակարգի ստեղծմանն ու զարգացմանը, որն իր հերթին ենթադրում է 3 հիմնական խնդիրների առաջադրում և լուծում.

1. *քաղաքացիների հակակոռուպցիոն աշխարհայացքի ձևավորում,*
2. *թափանցիկության ինստիտուցիոնալացում,*
3. *կոռուպցիայի կանխում՝ հակակոռուպցիոն մեխանիզմների ապահովման միջոցով:*

Կոռուպցիայի դեմ պայքարում կազմակերպության հռչակած և մինչ օրս գործող հինգ հիմնական գերակայություններն են՝

- *կոռուպցիան քաղաքականությունում,*
- *կոռուպցիան հասարակությունում,*
- *կոռուպցիան մասնավոր սեկտորում,*
- *միջազգային հակակոռուպցիոն պայմանագրեր,*
- *աղքատություն և զարգացում:*

TI-ը մի քանի ձևաչափերով ներկայացնում է տարեկան հաշվետվություններ ու զեկույցներ՝ նվիրված աշխարհում կոռուպցիայի չափորոշիչների վարկանիշային գնահատումներին: Մասնավորապես, տեղին է հիշատակել *«Global Corruption Barometer»/GCB* հետազոտություն-նախագիծը, որի հիմքերը դրվել են միայն վերջերս՝ 2003թ.: Նախագծի նպատակն է ամփոփել աշխարհում կոռուպցիայի նկատմամբ հասարակական ընկալումների գնահատումն ու վարկանիշավորումը: Համեմատականներ են անցկացվում կոռուպցիայի ցածր և բարձր մակարդակների, կոռուպցիայի և հասարակության այլ հիմնախնդիրների միջև, գնահատվում է այն եզրը, որտեղ պետական կամ մասնավոր ինստիտուտներն ու կառույցները կարող են կոռումպացված դիտվել: Նախագծի շրջանակներում վարկանիշային վերլուծություններ են իրականացվում նաև կաշառք տալու հարցում առկա հասարակական փորձառության, ինչպես նաև կոռուպցիայի զարգացման շուրջ հասարակական ակնկալիքների (կանխատեսումների) վերաբերյալ[2]:

Սակայն կազմակերպության կոռուպցիայի հաշվետվություններից անհրաժեշտ է հատկապես առանձնացնել *Corruption perceptions index* (Կոռուպցիայի ընկալման ինդեքս-ԿԸԻ) հաշվետվությունը, որի նախաձեռնման պատմությունը վերագրվում է արդեն 1995-ին: Այս կարգի զեկույցներում, ի տարբերություն նախորդ նախագծի, ընդգրկվում է ավելի քան 150 երկիր: ԿԸԻ-ն իր հետազոտություններում հիմնական ուշադրությունը դարձնում է պետական սեկտորում կոռուպցիոն ռիսկերին ու վարկանիշերին: ԿԸԻ 2006թ. մեթոդաբանությունը հիմնված է 12 տարբեր սոցիարցումների, ինչպես նաև 9 անկախ ինստիտուտների (Կոլումբիայի համալսարան, *«Freedom House», «Economist Intelligence Unit»,* Համաշխարհային տնտեսական ֆորում և այլն) հաշվետվությունների և ուսումնասիրությունների վրա:

Ստորև ներկայացվում են ԿԸԻ վարկանիշերը մի շարք երկրներում 2000-2006թթ. կտրվածքով: Անհրաժեշտ է նաև նշել, որ *Աղյուսակ 1-ում* ներկայացված ցուցանիշները, ժամա-

---

[1] http://www.transparency.org.

[2] Նախագծում ներառված չեն հարավկովկասյան երկրները, որից ելնելով՝ հաշվետվության արդյունքներն ու վերլուծությունները չեն ներկայացվում:

նակագրական համադրության համատեքստում, պայմանավորված ներառված երկրների թվաքանակի փոփոխականությամբ, կարող են ոչ այնքան ճշգրիտ և ստույգ պատկերներ տալ, այն է՝ նպատակահարմար է 2000-2006թթ. ընթացքում տվյալ պետության վարկանիշերի փոփոխությունը դիտարկել տվյալ տարեթվում ներառված երկրների թվաքանակի համադրության մեջ։

Ընդհանուր առմամբ, նշենք, որ 2000-2006թթ. ընթացքում[1] ԿԸԻ ցուցանիշներով Հարավային Կովկասում առաջատարի դիրքը պատկանում է Հայաստանին։ Ավելին, եթե 2000թ. Հայաստանի վարկանիշային առավելությունը հարևան երկու հանրապետությունների նկատմամբ այդքան ակնառու չէ, ապա 2003-2006թթ. կտրվածքով այն ավելի քան զգալի է։ 2006թ. զգալիորեն բարելավվել է միայն Վրաստանի ցուցանիշը՝ կրճատելով Հայաստանի միավորի հետ ունեցած մեծ տարբերությունը։ Նշենք նաև, որ 2000-2006թթ. Հայաստանի ԿԸԻ-ն գերազանցում է նաև Ռուսաստանին։

Այսպես, 2000թ. հաշվետվությունում, որտեղ ընդգրկված էին 99 երկրներ, Հայաստանը զբաղեցրել է 80-րդ սանդղակը՝ վաստակելով 2.5 միավոր, որն, ըստ էության, բավական ցածր ցուցանիշ պետք է համարել։ 2003թ. պատկերն ամբողջությամբ փոխվում է, արդյունքում՝ ընդգրկված 133 երկրների շարքում Հայաստանն անցնում է բավական բարձր դիրքի (78)՝ 3 միավորով, ինչը 2000թ. համեմատ որակապես առավել բարձր ցուցանիշ է, քան 0.5 միավորի տարբերության արձանագրումը (պայմանավորված ներառված երկրների թվաքանակի ավելացման հանգամանքով)։

Նույն տրամաբանությունն է նաև 2004թ. դրությամբ, երբ հաշվետվությունում ներառվել է 146 երկիր, Հայաստանն անցել է 82-րդ դիրք։ Արդյունքում, փաստորեն, Հայաստանի 3.1 միավորը որակական առումով իրականում ավելի բարձր է, քան 2000թ. 2.5 միավորը՝ արձանագրված 0.6 միավորի տարբերությամբ։ Այս տեսանկյունից, 2004թ. համեմատությամբ 2005 և 2006թթ. Հայաստանի վաստակած միավորների նվազեցումը, կապված ներառված երկրների թվաքանակի ավելացման հետ, ամենևին էլ չի վկայում Հայաստանի ցուցանիշի վատթարացման միտման մասին։

Ադրբեջանը 2000թ. ներառված 99 երկրների շարքում գրավել է 96-րդ դիրքը՝ 1.7 միավորով[2], իսկ 2003թ. ներառված 133 երկրների շարքում՝ 124-րդ դիրքը (1.8 միավոր)՝ 0.1 միավորի տարբերությամբ. այն է՝ 2003թ. միավորը որակական առումով գերազանցում է 2000թ. միավորին՝ կրկին պայմանավորված ներառված երկրների թվաքանակի ավելացմամբ։ Նշենք նաև, որ 2005 և հատկապես 2006թթ. Ադրբեջանի միավորը աճ է արձանագրել՝ կրկին հաշվառված երկրների քանակի ավելացման տրամաբանությամբ։ Եթե 2005թ. Ադրբեջանը 159 երկրների շարքում անցել է 137-րդ տեղը (2.2 միավորով), ապա 2006թ. ընդգրկված 163 երկրների շարքում՝ 130-րդ (արդեն 2.4 միավորով)։

Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա 2000թ. զեկույցում ընդգրկված 99 երկրների շարքում վերջինս, հայտնվելով 84-րդ դիրքում, ունեցել է 2.3 միավոր, որը որակական առումով հավասարազոր պետք է համարել 2002թ. համարժեք միավորին։ 2003-2005թթ. Վրաստանի միավորները, կապված ներառված երկրների քանակի ավելացման հետ, թեև քանակապես աճել են, սակայն որակապես զիջում են 2000 և 2002թթ. միավորներին։

Այլ է պատկերը 2006թ., որտեղ ներառված 163 երկրների շարքում Վրաստանը զբաղեցրել է բավական բարձր դիրք (99)՝ 2.8 միավորով, որը կրկին որակական տեսանկյունից ավելին է, քան 2005թ. 0.5 միավորի տարբերությունը։

Աղյուսակ 1

Կոռուպցիայի մակարդակը մի շարք երկրներում 2000-2006թթ.

Երկիր	2000 (99)*		2001 (91)		2002 (102)		2003 (133)		2004 (146)		2005 (159)		2006 (163)	
	Դ.	Վ.	Դ.	Վ.	Դ.	Վ.	Դ.	Վ.	Դ.	Վ.	Դ.	Վ.	Դ.	Վ.
Հայաստան	80	2.5	--**	--	--	--	78	3	82	3.1	88	2.9	93	2.9
Ադրբեջան	96	1.7	84	2	95	2	124	1.8	140	1.9	137	2.2	130	2.4

[1] 2001/2002թթ. Հայաստանի տվյալները բացակայում են։

[2] 2000թ. համեմատ Ադրբեջանի ցուցանիշը որակապես բարելավվել է 2001թ., կրկին վատթարացել 2002թ.։

Երկիր	2000 (99)*		2001 (91)		2002 (102)		2003 (133)		2004 (146)		2005 (159)		2006 (163)	
	Դ.	Վ.	Դ.	Վ.	Դ.	Վ.	Դ.	Վ.	Դ.	Վ.	Դ.	Վ.	Դ.	Վ.
Վրաստան	84	2.3	--	--	85	2.4	124	1.8	133	2	130	2.3	99	2.8
Ռուսաստան	82	2.4	79	2.3	71	2.7	86	2.7	90	2.8	126	2.4	121	2.5
Թուրքիա	54	3.6	54	3.6	64	3.2	77	3.1	77	3.2	65	3.5	60	3.8
ԱՄՆ	18	7.5	16	7.6	16	7.7	18	7.5	17	7.5	17	7.6	20	7.3
Իսրայել	20	6.8	16	7.6	18	7.3	21	7	26	6.4	28	6.3	34	5.9
Չինաստան	58	3.4	57	3.5	59	3.5	66	3.4	71	3.4	78	3.2	70	3.3
Իրան	--	--	--	--	--	--	78	3	87	2.9	88	2.9	105	2.7
Բելառուս	58	3.4	--	--	36	4.8	53	4.2	74	3.3	107	2.6	151	2.1
Ուկրաինա	75	2.6	83	2.1	85	2.4	106	2.3	122	2.2	107	2.6	99	2.8

Դ – դիրք (նշում է, թե որ հորիզոնականն է զբաղեցնում տվյալ երկիրը)։
Վ – Վարկանիշ (նշում է, թե ինչպիսի վարկանիշ ունի տվյալ երկիրը, որտեղ 10 ցուցանիշը համարվում է կոռուպցիայի ցածր մակարդակ կամ կոռուպցիան բացակայում է, իսկ 0-ն՝ կոռուպցիոն ինդեքսի բարձրացում, այն է՝ առավել կոռումպացված պետությունները)։
* ( ) փակագծերում նշվում է ընդգրկված երկրների քանակը։ Այսպես, 2000թ. տարեկան զեկույցում ներառված է 99 երկիր։
** -- կազմակերպության տարեկան հաշվետվությունում ներկայացված երկրների շարքում չի ընդգրկված (ինչի պատճառը, կազմակերպության ղեկավարության հավաստիացմամբ, բավարար տեղեկատվության բացակայությունն է)։

Աղյուսակ 2/3

Կոռուպցիայի մակարդակը հետխորհրդային տարածքում Հարավային Կովկասի և հարակից երկրներում, 2006թ.

Երկիր	2006 (163)	
	Դիրք	Վարկանիշ
Մոլդովա	79	3.2
Հայաստան	93	2.9
Վրաստան	99	2.8
Ուկրաինա	99	2.8
Ղազախստան	111	2.6
Ռուսաստան	121	2.5
Ադրբեջան	130	2.4
Թուրքմենստան	142	2.2
Ղրղզստան	142	2.2
Տաջիկստան	142	2.2
Բելառուս	151	2.1
Ուզբեկստան	151	2.1
Թուրքիա[1]	60	3.8
Հայաստան	93	2.9
Վրաստան	99	2.8
Իրան	105	2.7
Ռուսաստան	121	2.5
Ադրբեջան	130	2.4

[1] Հաշվի առնելով Թուրքիայի պետություն-հասարակություն հարաբերությունները, երկրում ժողովրդավարության չափանիշներն ու ժողովրդավարացման աստիճանը, ինչպես նաև պատմական հայացք նետելով Օսմանյան կայսրության պետական ապարատի խիստ կոռումպացվածությանը՝ որոշակի թերահավատություն է ներշնչում Թուրքիայի ԿԸԻ-ն և հիմք տալիս նշելու այդ ցուցանիշի՝ քաղաքական ենթատեքստ ունենալու հանգամանքը (Թուրքիա-ԵՄ)։ Այս առումով, Հայաստանը հաշվետվության կոռուպցիայի չափորոշիչում իրապես առաջատար է Հարավային Կովկաս-հարակից երկրներ ձևաչափում։

Աղյուսակ 2/3-ում պատկերված վարկանիշային ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2006թ. դրությամբ թե՛ հետխորհրդային հանրապետությունների և թե՛ Հարավային Կովկաս-հարակից երկրներ ձևաչափերում Հայաստանի ԿԸԻ-ն արձանագրել է լավագույն ցուցանիշները՝ զիջելով համապատասխանաբար Մոլդովային և Թուրքիային։ Երկու աղյուսակներից էլ կարելի է նկատել, որ ոլորտում Հարավային Կովկասի առաջատարին համեմատաբար մոտ է գտնվում Վրաստանը, իսկ Ադրբեջանը զգալիորեն զիջում է (վերջինս 163 երկրների շարքում գրավել է 130-րդ հորիզոնականը)։ Ավելին, Աղյուսակ 3-ում Հարավային Կովկաս-հարակից երկրներ ձևաչափում Ադրբեջանը դասվել է առավելագույն կոռումպացված դիրքում։ Բավական ցածր է նաև Ռուսաստանի ցուցանիշը, որին գերազանցում են մի կողմից Ուկրաինան և Ղազախստանը, մյուս կողմից՝ Թուրքիան և Իրանը։

Ընդհանուր առմամբ, նշենք նաև, որ կազմակերպության 2006թ. հաշվետվության համաձայն՝ կոռուպցիայի ոլորտում լավագույն ցուցանիշներն արձանագրել են հետևյալ երկրները՝ Իսլանդիա, Ֆինլանդիա և Նոր Զելանդիա (1-ին սանդղակ), Դանիա (4), Սինգապուր (5), Շվեդիա (6), Շվեյցարիա (7), Նորվեգիա (8), Ավստրալիա և Նիդեռլանդներ (9)։ Զեկույցի տվյալներով՝ 2006թ. դրությամբ առավել կոռումպացված պետությունների շարքում դասվում են Բելառուսը (151), Ուզբեկստանը (151), Բանգլադեշը (156), Սուդանը (156), Իրաքը և Մյանմարը (163)։

Կարեն Վերանյան
«Նորավանք» հիմնադրամ